



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12780

34 1865

7-28



2010


34
7-28

պ

Պ Ա Տ Ժ Ա Կ Ա Ն

Օ Ր Ի Խ Ա Ա Պ Ի Ր Զ

ՕՍՄԱՆԵԱՆ ՏԻՐՈՒԹԵԱՆ




Հ Ա Ս Տ Ա Տ Ե Ա Լ

Կ Ա Յ Ս Ե Ր Ա Կ Ա Ն Հ Ր Ո Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ի



(Ի 28 ԶԻԼՀԻՃՃԻ 1274 (25 ՅՈՒԼԻՍ 1858)



2001

Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

7468

№ (45)

Ученый № 45
государственный университет
в Ленинграде

1911 г. 1

№ 6



6441
38

Ն Ա Խ Ա Զ Ա Ի Ի Ղ

ԳԼՈՒԽ Ա .

Առ հասարակ դատապարտելի գործոց եւ պատ-
ժոց այլ եւ այլ աստիճանները , եւ քանի մը
ընդհանուր սկզբունք .

ՅՕԻՈՒԱԾ 1^o . Ինչպէս որ ուղղակի
տէրութեան դէմ գործուած յանցանք
ները պատժել տէրութեան կը վերաբե-
րի , այնպէս ալ մասնաւորաց դէմ գոր-
ծուած յանցանքները՝ հասարակաց խա-
ղաղութիւնը վրդովեցնուն համար՝ տէ-
րութեան կը վերաբերի պատժել : Այս
պատճառաւ ներկայ օրինագիրքը պատ-
ժոց այլ եւ այլ աստիճանները կը սահ-
մանէ , որոց գործադրութիւնը՝ գերագոյն
իշխանութեան յանձնած է Շէրին (քա-
ղաքային-կրօնական օրէնքը) , այն կերպով
որ այս տրամադրութիւնները չկրնան
երբէք դպչիլ այն անհատական իրա-
ւանց՝ որ Շէրիով ապահովեալ են :

ՅՕԻ . 2^o . Օրինօք դատապարտելի գոր-
ծերն երեք տեսակ են . 1^o . ոճիրք . 2^o . յան-
ցանք . 3^o . օրինազանցութիւնք :

ՅՕԻ . 3^o . Ոճիրներն են ահարկու պատ-
ժոց ներքեւ ինկած գործերը . Ահարկու
պատիժներն են՝ մահ , առժամանակեայ
կամ մշտնջենաւոր շղթայակապ աշխա-
տութիւն ու բերդարդելութիւն՝ ի տե-
սիլ հասարակութեան դրուելով . մըշ-
տընջենաւոր աքսոր , ամեն աստիճաննե-
րէ եւ տէրութեան կամ հասարակաց
պաշտօններէ ցկեանս զրկում . քաղաքա-
յին իրաւունքներէ զրկում :

ՅՕԻ . 4^o . Յանցանք են զգաստացուցիչ
պատժոց ներքեւ ինկած գործերը : Բզ-
գաստացուցիչ պատիժներն են՝ մէկ շա-

բաթէն աւելի բանտարդելութիւն , ժա-
մանակեայ աքսոր , պաշտօնէ իյնալ ,
տուգանք :

ՅՕԻ . 5^o . Օրինազանցութիւն են սաս-
տողական պատժոց ներքեւ ինկած գոր-
ծերը . Սաստողական պատիժներն են
քսան եւ չորս ժամէն մինչև մէկ շաբաթ
բանտարկութիւն , եւ մինչև հարիւր
դուրուշ տուգանք :

ՅՕԻ . 6^o . Աւերոյիշեալ պատիժները
կրնան՝ օրինօք որոշեալ պարագայից հա-
մեմատ՝ զատ զատ կամ ՚ի միասին վըճ-
ուուիլ եւ ՚ի գործ դրուիլ :

ՅՕԻ . 7^o . Դամանակաւոր աքսորի , ժա-
մանակաւոր բանտարկութեան , ժամա-
նակաւոր բերդարդելութեան կամ ժա-
մանակաւոր շղթայակապ աշխատու-
թեան դատապարտեալ անձինք եթէ
փախչելու ըլլան , բռնուելնէն ետև ոչ
միայն իրենց պատժոյն մնացեալ մասը կը
կրեն , այլ եւ կանխաւ վճռուած տևո-
ղութեան երրորդ մասէն մինչև կէսին
չափ ժամանակ եւս յաւելուած կըլլայ
վրան :

Եթէ փախչողը մշտնջենաւոր աք-
սորի դատապարտեալ էր , պատիժը մըշ-
տընջենաւոր բերդարդելութեան կը
փոխուի . իսկ եթէ մշտնջենաւոր բեր-
դարդելութեան դատապարտեալ էր ,
մշտնջենաւոր շղթայակապ աշխատու-
թեան կը դատապարտուի :

ՅՕԻ . 8^o . Օրինաց սահմանած բացա-
ռութիւնները մէկզի առնելով , կրկնա-
մեղութիւնը (նոյն յանցանքը վերստին
գործել)՝ առաջուան պատժոյն կրկնա-
պատիկը կրելու կը դատապարտուի :

307. 9. Ա երոյիշեալ պատիժները ոճ-
րագործաց, յանցաւորաց և օրինազան-
ցից դէմ վճռուելէ ետև, դատախազ-
ներուն կամ ֆնասետլ կողմանց տոյժ կամ
հատուցում պահանջելու իրաւունքն ալ
բնաւ չկորսու իր:

307. 10. Եթէ դրամական տուգանաց
հետ գողութեանց կամ յափշտակու-
թեանց հատուցում և տոյժ ալ միան-
գամայն վճռուի, նախ և առաջ հատու-
ցումն ու տոյժը կառնուի:

307. 11. Եթէ մէկը տուգանք, հա-
տուցում, տոյժ, տոկոս և ուրիշ ծախք
վճարելու դատապարտուի և չուզէ կա-
տարել, վճիռը բանտարկութեամբ 'ի
գործ կը դրուի:

307. 12. Ոճրագործութեանց և յան-
ցանաց վերաբերեալ պարագաներու մէջ
ոստիկանութեան հսկողութեանը ներքև
դրուելու, դրամական տուգանք վճարե-
լու, և ոճրագործութեամբ կամ յան-
ցանօք ձեռք բերուած կամ գոյացած
ինչքերն՝ ինչպէս նաև ոճրագործութեան
կամ յանցանաց կատարմանը գործած-
ւած կամ սահմանուած նիւթերն ալ
յատկապէս զրաւելու պատիժները կըր-
նան 'ի միասին վճռուիլ և 'ի գործ դըր-
ւիլ:

307. 13. Տէրութեան ներքին կամ
արտաքին անգորրութեանը դէմ ոճրա-
րագործութեամբ կամ յանցանօք դա-
տապարտեալ անձինք՝ իրենց օրինական
պատիժը կրելէ ետև՝ հարկաւ ոստիկա-
նութեան հսկողութեանը ներքև պիտի
դրուին:

307. 14. Ոստիկանութեան հսկողու-
թեանը ներքև դրուիլն է՝ տէրութեան
որոշելիք տեղերը չկրնալ նստիլ. բնակիլ
ուզած տեղը և հոն երթալու համար
անցնելիք տեղերը յառաջուց ծանուցա-
նել որպէս զի ճանբու հրամանագրին մէջ

նշանակուին. հոն հասնելէն ետև՝ քսան
և չորս ժամ չանցած՝ տեղական իշխա-
նութեան իմացունել իր հասնիլը. այն
տեղէն ուրիշ տեղ մը երթալու ժամու-
նակ՝ երեք օր առաջ տեղական իշխանու-
թեան իմացընել և նորէն ճանբու հրա-
մանագիր ստանալ: Սոյն տրամադրու-
թեանց զանցառութիւն ընող անձը՝ մին-
չև մէկ տարի կը բանտարկուի: Դատա-
պարտեալ մը չկրնար ոստիկանութեան
հսկողութեանը ներքև դրուիլ՝ մինչև որ
օրինաց մէկ մասնաւոր տրամադրու-
թիւնը չհրամայէ:

307. 15. Եթէ ոճիր, յանցանք և
օրինազանցութիւն իշխանութեան կող-
մէն ստուգուած կամ դատախազ մը ու-
նեցած ժամանակ ինչ օրէնք որ կայ՝ այն
օրէնքով կը պատժուին, և ոչ այն ժա-
մանակէն ետև հաստատեալ օրինօք:

Գ. Ա Ռ ի Բ .

Ոճրագործութեանց վերաբերեալ
պատիժք .

307. 16. Մահուան պատիժը վարը
նշանակեալ ոճիրները գործող անձանց
կը տրուի: Մահուան դատապարտեալ
ոճրագործին պատիժը չկրնար 'ի գործ
դրուիլ՝ մինչև որ անոր ոճրագործու-
թեան ապացոյցն ու վճիռը պարունա-
կող կայսերական հրովարտակը նախ 'ի
լուր ամենեցուն չկարդացուի մահա-
ցուցման տեղը:

307. 17. Մահուամբ պատժուած
անձին մարմինը՝ երբոր ժառանգ չունե-
նայ, իր ազգին կը յանձնուի որ թաղեն:

307. 18. Ի մահ դատապարտեալ կին
մը եթէ յղի ըլլալը յայտնէ, և ստոյգ
ըլլալը հաստատուի, պատիժը որդեճ-
նութենէն ետքը 'ի գործ կը դրուի:

307. 19. Եթէ պատիժը աշխատու-
թեան պատիժն է՝ ամենաճանր աշխա-

տութեանց գործածուիլ՝ ոտքը շլթա-
յով: Եղթայակապ աշխատութեան
դատապարտեալ անձը նաև գտնուած
քաղաքին մէկ հրապարակին կամ բազ-
մամարդ փողոցին մէջ՝ ի ցոյց հասարա-
կութեան կը դրուի երկու ժամ՝ զինքը
դատապարտող ատենին վճռոյն բովան-
դակութիւնը խոշոր գրերով գրուած
և կուրծքին վրայ գրուած: յետոյ ոտ-
քը երկաթ զարնուելով՝ պատիժը կրե-
լիք տեղը կը տարուի: Տասնուութ տա-
րեկանէն վար և եօթանասուն տարե-
կանէն վեր անձինք ազատ են ՚ի ցոյց
հասարակութեան դրուելէ:

ՅՕԴ. 20.՝ Մշտնջենաւոր շղթայակապ
աշխատութեան պատիժն է՝ ՚ի ցոյց հա-
սարակութեան դրուելէ ետև՝ կառա-
վարութեան նշանակած տեղերը ամե-
նաճանր աշխատութեանց գործածուիլ
մինչև ցմահ՝ ոտքը երկաթով:

ՅՕԴ. 21.՝ Առժամանակեայ շղթայա-
կապ աշխատութեան պատիժն է՝ ՚ի ցոյց
հասարակութեան դրուելէ ետև՝ կա-
ռավարութեան նշանակած տեղերը ամե-
նաճանր աշխատութեանց գործած-
ուիլ երկաթ յոտին՝ երեքէն մինչև տա-
սընև հինգ տարի: Սակայն այս պատիժը
եթէ հինգ տարիէն պակաս ըլլայ՝ դա-
տապարտելոյն գտնուած տեղն ալ կրնայ
՚ի գործ դրուիլ:

ՅՕԴ. 22.՝ Դատապարտելոյն վերաբե-
րեալ կրօնին յատուկ եղած տօնի օրերը՝
ոչ մահուան պատիժ և ոչ հրապարակա-
տեսիլ նշակութիւն չկրնար տեղի
ունենալ:

ՅՕԴ. 23.՝ Մշտնջենաւոր բերդարդե-
լութեան պատիժն է՝ կառավարութեան
նշանակած բերդերէն մէկուն մէջ արդիւ-
ուած մնալ մինչև ցմահ:

ՅՕԴ. 24.՝ Դամանակաւոր բերդար-

դելութեան պատիժն է՝ երեքէն մինչև
տասնև հինգ տարի կառավարութեան
նշանակած բերդերէն մէկուն մէջ ար-
դիւուած մնալ:

ՅՕԴ. 25.՝ Բերդարդելութեան պա-
տիժը միանգամայն արսոր և բանտար-
կութիւն ըլլալով, դատապարտեալը
կրնայ ստիկանութեան կանոններուն
որոշած սահմանին չափովը՝ թէ՛ բեր-
դին մէջ և թէ՛ դուրսը գտնուած ան-
ձանց հետ հաղորդակցիլ:

ՅՕԴ. 26.՝ Դամանակաւոր շղթայա-
կապ աշխատութեան և բերդարդե-
լութեան պատժոց տեղողութիւնը՝ դա-
տապարտութեան վճռոյն վաւերացման
օրէն կը համրուի:

ՅՕԴ. 27.՝ Դամանակաւոր շղթայակապ
աշխատութեան կամ բերդարդելութեան
դատապարտեալ անձինք՝ իրենց պատժա-
կրրութեան միջոցին անձնական գործե-
րէ և զբաղմունքէ օրինապէս արդիւեալ
ըլլալով, անոնց ինչքն ու ստացուածքը
մատակարարելու համար փոխանորդ մը
պիտի կարգուի կառավարութեան հա-
ւանութեամբ: Փոխանորդը՝ պատժոյն
տեղողութեան միջոցին՝ չկրնար դատա-
պարտելոյն եկամուտներէն ստակ տալ
կամ զրկել անոր՝ բաց ՚ի բանտերու կա-
նոնադրութեան թոյլ տուած գումարէն:
Իսկ պատժակրութեան ժամանակը լը-
բանալէն վերջը, դատապարտելոյն բոլոր
գոյքն իրեն պիտի յանձնուի, և փոխա-
նորդըն ալ իր մատակարարութեան հա-
շիւը պիտի տայ անոր:

ՅՕԴ. 28.՝ Մշտնջենաւոր արսորն է
կառավարութենէն նշանակեալ տեղ մը
զրկուիլ և մինչև ցմահ հօն բնակիլ:
Երբոր արսորեալն ուզէ՝ իր ընտանիքն
ալ կրնայ հօն փոխադրուիլ:

ՅՕԴ. 29.՝ Աստիճաններէ ու պաշտօն

ներէ մշտնջենապէս զրկուիլն է՝ Տէրու թեան մեծ ու պղտիկ պաշտօններու մէջ թէ՛ ուղղակի և թէ՛ վարձակալութեան ճանքով դորձած ու ելու և աստիճան թռչակ ու պատուանշան ստանալու իրաւունքէն յաւիտեան զրկուիլ : Աթէ դատապարտեալ մը աստիճանաւոր և տէրութեան պաշտօնատար է, նախ և առաջ ու իր աստիճանէն, պաշտօնէն և թռչակէն կը զրկի :

807 . 30 . Մշտնջենապէս կամ առ ժամանակեայ շղթայակապ աշխատութեան, բերդարգելութեան և աքսորի դատապարտեալ անձինք՝ աստիճաններէ ու պաշտօններէ յաւիտեան կը զրկուին : Բայց եթէ ժամանակաւոր բերդարգելութիւնն իբրև պատիժ վճռուի, դատապարտեալը միանգամայն աստիճաններէ ու պաշտօններէ կը զրկուի պատժակրութեան միջոցին : Իսկ եթէ պատժակրութեան ժամանակը լրանալէ ետև՝ իր վարուց ուղղուած ըլլալը կառավարութեան յայտնի ըլլայ, աստիճան և պատիւ ստանալու իրաւունքը կրնայ նորէն ձեռք բերել : Բայց այս իրաւունքը ձեռք բերելու և վարելու համար՝ հարկ է որ բերդարգելութեան տևողութեան գո՛նէ կէսին չափ ժամանակ անցնի :

Աթէ բերդարգելութեան պատիժը շղթայակապ աշխատութեան տեղ վճռուած ըլլայ, այս պարագայիս մէջ դատապարտեալը՝ շղթայակապ աշխատութեան դատապարտեալ անձանց պէս յաւիտեան կը զրկուի աստիճաններէ ու տէրութեան պաշտօններէ :

807 . 31 . Քաղաքական իրաւունքներէ անկումն է . 1 . նախընթաց 297 յօդուածին համեմատ՝ ամեն աստիճաններէ ու տէրութեան պաշտօններէ մշտնջենապէս զրկում . 2 . ամեն քաղաքային և ազգային իրաւունքներէ զրկում, այսինքն թէ՛ երկրին թէ՛ իր ազգին և թէ՛ իր արհեստին վերաբերեալ որ և է հասարակաց պաշտօն չկրնալ կատարել . 3 . դպրոցի կամ վարժատան մէջ ուսուցչութիւն կամ վարժապետութիւն չկրնալ ընել . 4 . դատաստանի կամ ուրիշ որ և է դործի մէջ վկայութիւնը չբռնուիլ, այլ միայն իբրև պարզ տեղեկութիւն ընդունուիլ՝ առանց ազդեցութիւն մ'ունենալու արուելիք վճռոյն վրայ . նմանապէս դատի մէջ փոխանորդութիւն չկրնալ ընել . 5 . խնամակալ (Աստի) չկրնալ ըլլալ . 6 . գէնք չկրնալ կրել :

807 . 32 . Նախընթաց 29 և 317 յօդուածոց մէջ նշանակեալ աստիճաններէ և տէրութեան պաշտօններէ զրկման և քաղաքային իրաւունքներէ անկման պատիժները կրնան երբեմն մշտնջենաւոր կամ առ ժամանակեայ շղթայակապ աշխատութեան, բերդարգելութեան կամ աքսորի հետ ՚ի միասին վճռուիլ . երբեմն ալ իբրև յատուկ պատիժ վճռուիլ : Այս վերջին պարագային մէջ բանտարկութիւն ալ ՚ի միասին կը վճռուի, որուն տևողութիւնը երեք տարիէն աւելի չկրնար ըլլալ :

807 . 33 . Մահապարտութեան, մրշարնջենաւոր կամ առ ժամանակեայ շղթայակապ աշխատութեան, բերդարգելութեան, մշտնջենաւոր աքսորի, աստիճաններէ և պաշտօններէ զրկման և քաղաքային իրաւունքներէ անկման վճիռներուն բովանդակութիւնը՝ գաւառին գլխաւոր քաղաքը՝ ուր որ վճիռը արուած ըլլայ, ոճրագործութիւնը կատարուած նահանգին մէջ, վճռոյն գործադրուելու տեղը և դատապարտելոյն բնակած տեղը պիտի կախուի : Այսպէս մէջ՝ վճռապիտը ոստիկանութեան գլխաւոր դրան առջև, գաւառացի մէջ ալ կառավարչին նստած ապարանքին դրան առջև կը կախուի :

ԳԼՈՒԽ Գ .

Յանցանաց եւ օրինազանցութեանց վերաբերեալ պատիժք .

307 . 34 . Բանտարկութեան պատիժն է՝ Տէրութեան բանտերուն մէջ փակուիլ՝ որչափ ժամանակ որ վճարուած ըլլայ : Այս պատժոյն աւելորդութիւնը 24 ժամէն մինչև երեք տարի է , յանցաւորին բանտ դրուելէն սկսեալ : Բանտարկեալները՝ Տէրութեան հաստատած կանոնին համեմատ՝ իրենց վիճակին և տրամադրութեանը յարմար աշխատութիւններու կը գործածուին :

307 . 35 . Առժամանակեայ աքսորանաց պատիժն է՝ բնակած տեղէն ուրիշ տեղ մը զրկուիլ , և երեք ամսէն մինչև երեք տարի հոն կենալ :

307 . 36 . Տէրութեան պաշտօնէ ձրգուիլն է՝ Պատժական օրինաց համեմատ պաշտօնէն հանուիլ և անոր յատկացեալ ամսականէն զրկուիլ : Այս դադարման աւելորդութիւնը երեք ամսէն մինչև վեց տարի է , այսինքն դատապարտեալներն իրենց այս պատժոյն աւելորդութեան միջոցին չեն կրնար որ և է պաշտօնի դրուիլ և ամսական կամ թոշակ մ'ստանալ : Այն անձինքը՝ որ դատապարտուած ժամանակինն պաշտօն ունեցած չըլլան , չեն կրնար՝ ոչ պաշտօնի դրուիլ և ոչ ամսական ստանալ իրենց պատժոյն աւելորդութեան միջոցին :

307 . 37 . Տուգանաց պատիժն է՝ ըստ օրինաց որոշեալ գումար մը դատապարտեալէն առնուիլ : Աթէ մարդ մը՝ միանգամայն բանտարկութեան և տուգանաց դատապարտուելով՝ տուգանքը վճարելու կարողութիւն չունենայ , բանտարկութեան աւելորդութիւնը՝ որոշեալ ժամանակին կէսին չափ կաւելնայ : Իսկ եթէ միայն տուգանաց դատապարտեալ ըլլայ և չկրնայ վճարել , տուգանքին

չափուն համեմատ՝ 24 ժամէն մինչև երեք ամիս բանտարկութիւն կը կրէ :

307 . 38 . Յանցանք դատող ատեանները՝ սոյն գլխոյն մէջ նշանակեալ պատիժներէն դատ ՅԱՐԴ յօդուածին մէջ որոշուած զրկմանց մէկ մասն ալ կրնան ՚ի միասին վճարել :

307 . 39 . Տուգանքէ դոյացած ստակը Տէրութեան դանձուն վերաբերեալ ըլլալով , եթէ յանցաւոր մը՝ պատիժը լրանալէն ետև՝ տուգանքը վճարած չըլլայ , և ասոր համար վեց ամիս բանտարկուելէ ետև՝ վճարելու կսրող չըլլալը ապացուցանէ , առժամանակեայ կերպով կարճակուի բանտէն :

Տուգանաց համար բանտարկութիւնը՝ եթէ օրինազանցութեան պատճառաւ ըլլայ , երեք ամսէն աւելի չի կրնար տևել :

Առժամանակեայ կերպով արձակեալ անձինք՝ եթէ ետքէն կարողութիւն ձեռք բերեն և իշխանութիւնն ալ իմանայ , կը բռնուին և տուգանքը վճարելու կ'ստիպուին :

ԳԼՈՒԽ Դ .

Ամբաստանեալ մը ներողութեան արժանի , պատասխանատու կամ պատժապարտ ընող պարագաներ :

307 . 40 . Ամբաստանեալ մը որ դեռ յարբունս հասած չէ , գործած յանցանքին համար սահմանուած պատժոյն ենթակայ չկրնար ըլլալ . և եթէ բարին ու չարը որոշելու կարող չէ , իր ծնողաց կամ ազգականացը կը յանձնուի՝ հաստատ երաշխաւորութիւն առնելով : Աթէ ծնողքը կամ ազգականները չկրնան ապահով երաշխաւորութիւն մը տալ , յանցաւոր տղան զդատանապուհ համար ոստիկանութեան ձեռօք կրբանտարկուի պատշաճ դատուածին չափ

ժամանակ : Բայց երբոր ամբաստանեալը թէ և յարբունս հասած չըլլալով՝ բարին ու չարը կը ճանչէ և յանցանքը դիտու թեամբ գործած է , եթէ գործած յանցանքը մահուամբ կամ մշանջենաւոր շղթայակապ աշխատութեամբ կամ մշանջենաւոր բերդարգելութեամբ և կամ մշանջենաւոր արքսորանօք պատժելի է , զգաստանալու համար հինգէն տասն տարի բանտարկութեամբ կը պատժուի . իսկ եթէ գործած յանցանքը ժամանակաւոր շղթայակապ աշխատութեամբ կամ բերդարգելութեամբ և կամ արքսորանօք պատժելի է , սոյն պատժոց տեղողութեան առ նուազն չորրորդ մասին և առ առաւելն երրորդ մասին չափ ժամանակ կը բանտարկուի : Այս երկու պարագայից մէջ ալ հինգէն տասն տարի ոստիկանութեան հսկողութեանը ներքէ կը դրուի : Եթէ յանցաւորը քաղաքային իրաւունքներէ զրկուելու պատժոյն ենթակայ ըլլայ , վեց ամսէն երեք տարի կը բանտարկուի . իսկ եթէ վերոյիշեալ պատիժներէն աւելի թեթեւ պատժոյ մը արժանի է , նոյն պատժոյն տեղողութեան երրորդ մասը չանցնելու կերպով որոշեալ ժամանակ մը կը բանտարկուի :

307 . 41° Ամբաստանեալ մը ազատ կը մնայ օրինական պատժէ , եթէ ստուգուի որ յանցանքը գործած ժամանակ խելազիրկ էր :

307 . 42° Նոյնպէս ազատ կը մնայ օրինական պատժէ այն մարդը՝ որուն համար արժանապէս կը հաստատուի թէ յանցանքն ակամայ և բռնադատութեամբ գործած է : Բայց բռնադատութիւն ըսելով օրէնքն այնպիսի բուռն ստիպում մը կը հասկընայ՝ որուն չի կրնայ դէմ դրած ըլլալ ամբաստանեալը , և ոճրին կամ յանցանաց աստիճանին համեմատ բոլորովին անմեղ

վիճակի մէջ երեցրնէ դայն : Աստի ակնածութենէ ու յարգանքէ յառաջ եկած գործերը , ինչպէս են ծնողի մը իւր որդւոյն կամ տիրոջ մը իւր ծառային տուած հրամանները՝ բռնադատութիւն չեն կրնար համարուիլ :

307 . 43° Օրինական պատժոց մէջ այր և կնոջ խտրութիւն չկայ . սակայն պատժոց ոմանց գործադրութեան ձեւերուն մէջ կանանց յատուկ վիճակին ակնածութիւն ընել հարկ է :


307 . 44° Գողցուած ապրանքները որու քով որ գանուին՝ անկէ կառնուին . բայց տոյժն և ուրիշ ծախքերը յանցաւորին վրայ կը վճուուին :

307 . 45° Ոճրի մը կամ յանցանքի մը մեղսակիցները նոյն ոճրին կամ յանցանքին բուն հեղինակին պէս կը պատժուին , ՚ի բաց առեալ այն պարագաներն՝ ուր օրէնքն ուրիշ կերպ կը տրամադրէ :

307 . 46° Ոճրի մը կամ յանցանքի մը մեղսակիցները՝ գողցուած ապրանքեւ տալու , տոյժ և ծախք վճարելու մասին իբրև իրարու երաշխաւոր համարուելով , եթէ մէկը կարողութիւն չունենայ , կարողութիւն ունեցողէն կառնուի :

307 . 47° Մահուան պատիժը շղթայակապ աշխատութեան , սոյն պատիժը բերդարգելութեան , մշանջենաւոր բերդարգելութիւնը մշանջեան արքսորի , ժամանակեայ բերդարգելութիւնն ու բանտարկութիւնը ժամանակեայ արքսորի կրնան փոխուիլ օգոստոսիառ Ինքնակալին յատուկ հրամանաւր :

Մինչև որ կայսերական յատուկ հրաման մը չըլլայ , կամ օրինաց մէջ յատուկ և յայանի տրամադրութիւն մը չըլլայ , պատիժ մը չկրնար երբէք ներուիլ , փոխուիլ կամ թեթեւալ :



ԳԻՐՔ ԱՌԱԶԻՆ

ՀԱՍԱՐԱԿԱՏ ՎՆԱՍԱԿԱՐ ՈՃԻՐՆԵՐՆ ՈՒ ՅԱՆՑԱՆԲ-
ՆԵՐԸ, ԵՒ ԱՆՈՆՏ ՊԱՏԻՃՆԵՐԸ.

Գ. ԱՌԻԽ Ա.

Օսմանեան տէրութեան արտաքին ապա-
հովութիւնը վրդովող ռիթք եւ
յանցանք.

ՅՕԴ. 48°. Տէրութեան հպատակներէն ու իցէ մէկը՝ որ տէրութեան թըշնամեացը հետ միանալով տէրութեան դէմ գէնք առնու, մահուամբ կը պատժուի:

ՅՕԴ. 49°. Տէրութեան հպատակներէն ու իցէ մէկը՝ որ օտար տէրութիւններն օսմանեան տէրութեան դէմ թշնամութեան կամ պատերազմի թելադրելու, կամ թշնամութեան եւ պատերազմի պատճառներ եւ միջոցներ անոնց մատակարարելու նպատակաւ՝ անոնց հետ կամ անոնց գործակալացը հետ բանակցի եւ դաւադրութիւն նիւթէ, այն բանակցութիւններն ու դաւադրութիւնները թշնամութեանց առիթ ըլլան կամ ոչ՝ մահուամբ կը պատժուի:

ՅՕԴ. 50°. Տէրութեան հպատակներէն ու իցէ մէկը՝ որ տէրութեան թշնամիներուն օսմանեան հողը մանելը դիւրացընելու, կամ տէրութեան մէկ քաղաքը, բերդը, ամրութիւնները, նաւահանգիստները, համբարանոցները, զինարանները, նաւերը անոնց յանձնելու, կամ տէրութեան թշնամեացը զօրքով, ստակով, պաշարով, զէնքով ու պատերազմական մթերքով օգնելու, եւ կամ կայսերական գօրաց հաւատարմութիւնը խախտելով կամ ուրիշ որ եւ է միջոցաւ օսմանեան երկիրներուն կամ գօրաց վրայ թշնամեաց զէնքերուն յառաջդիմութեանն ու յաղթութեանը ձեռնառու ըլլալու նպատակաւ անոնց

հետ բանակցի կամ դաւադրութիւն նիւթէ՝ մահուամբ կը պատժուի:

ՅՕԴ. 51°. Եթէ թշնամի տէրութեան մը հպատակաց հետ բանակցութիւնը կամ թղթակցութիւնը վերոյիշեալ ոճը լազորութեանց նպատակաւ չըլլայ, բայց օսմանեան տէրութեան կամ անոր դաշնակիցներուն քաղաքական կամ զինուորական վիճակին վրայ մատակարար տեղեկութիւններ մատակարարած ըլլայ, այսպիսի բանակցութիւններ ընողը՝ յանցանքին աստիճանին համեմատ ժամանակաւոր բերդարդելութեամբ կը պատժուի: Իսկ եթէ այս կերպ բանակցութիւնները լրտեսութեան մօտ ըլլան, այսինքն կայսերական կառավարութեան պատերազմական անօրէնութիւնները թշնամեաց խնացընելու դիտաւորութեամբ եղած ըլլան, այնպիսի անձ մը՝ յանցանքին աստիճանին համեմատ ժամանակաւոր շղթայակապ աշխատութեամբ կը պատժուի. եւ եթէ այս յանցանքը բանակներուն մէջ պատահի, յանցաւորը զինուորական օրինաց համեմատ կրնայ մահուամբ ալ պատժուիլ:

ՅՕԴ. 52°. Տէրութեան պաշտօնատար կամ գործակալ մը եւ կամ ուրիշ ու իցէ անձ մը՝ որ իր պաշտօնին պատճառաւ կամ յատկապէս պաշտօնական կերպով Օսմանեան տէրութեան մէկ դաղանի դեսպանախօսութեանը կամ զինուորական արշաւանաց վերաբերեալ դաղանի որոշման մը անդեակ ըլլալով, առանց հրամանի ուղղապէս կամ անուղղապէս օտար կամ թշնամի տէրութեան մը գործակալներուն զայն հաղորդէ, մահուամբ կը պատժուի:

ՅՕԴ. 53°. Օսմանեան տէրութեան պաշտօնատար մը՝ որ իր պաշտօնին պատճառաւ իրեն պահ տրուած ամրութեանց, զինարանաց, նաւարանաց կամ

նաւահանգստաց յատակագիծներն ու
քարտէսները (խարթա), կամ անոնցմէ
մէկ հատը թշնամւոյն կամ անոր մար-
դոցը տայ, երեքէն տասն և հինգ տարի
շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուի: Իսկ եթէ այն յատակագիծներն
առանց հրամանի չէզոք կամ դաշնակից
օտար տէրութեան մը գործակալներուն
տայ, մէկ տարիէն երեք տարի բանտար-
կութեամբ կը պատժուի:

307. 54. Սեհափառ Սուլթանին
ո և իցէ մէկ հպատակը՝ որ տէրութեան
մէկ թշնամիին կողմէն բան իմանալու
համար զրկուած լրտեսները գիտու-
թեամբ թաքուցանէ կամ թաքուցա-
նել տայ, մշանջենաւ որ շղթայակապ աշ-
խատութեամբ կը պատժուի:

Գ. Ա. Խ. Բ.

Օսմանեան տերութեան ներքին ապա-
հովութիւնը վրդովող ունիք և
յանցանք:

307. 55. Ով որ տէրութեան հը-
պատակներն ուղղապէս կամ անուղղա-
պէս կայսերական կառավարութեան
դէմ ապստամբելու և գէնք առնելու
գրգռէ, մահուամբ կը պատժուի, ե-
թէ ապստամբութիւնը կատարուի կամ
գործադրութեան սկզբնաւ որութիւն մը
ունենայ:

307. 56. Ով որ Օսմանեան տէ-
րութեան մէջ քաղաքական պատերազմ
յարուցանէ բնակիչներն իրարու դէմ
զինուորելով, և մէկ կամ քանի մը տե-
ղեր աւերում, կոտորած և աւարառու-
թիւն ընել տալու յանգգնի, մահուամբ
կը պատժուի, եթէ ձեռնարկած ուժիւրը
կատարում գտնէ կամ գործադրու-
թեան սկսած ըլլայ:

307. 57. Մախրնթայ 55 և 56 յօդ-
ուածներուն մէջ յիշուած ուժիւրներէն

մէկը եթէ խուճը մը ապստամբներու
կամ ստահակներու ձեռք կատարուի
կամ փորձուի, անոնց առաջնորդները
կամ գրգռիչները՝ ուր որ բռնուին՝ մահ-
ւամբ կը պատժուին: Իսկ խուճիին միւս
մարդիկը՝ որ ապստամբութեան կամ
չարագործութեան կատարուած տեղը
բռնուին, իրենց յանցանաց աստիճանին
համեմատ մշանջենաւ որ կամ առժա-
մանակեայ շղթայակապ աշխատութեամբ
կը պատժուին:

307. 58. Եթէ նախընթաց 55 և 56
յօդուածներուն մէջ յիշուած ուժիւ-
րներէն մէկը գործելու համար քանի մը
անձինք իրարու հետ խորհուրդ ընելով
միաբանին, և կատարումը պատրաստե-
լիք գործելու ձեռնամուխ ըլլան, թէ և
խորհուրդնին կատարում չգտնէ, մըշ-
տընջեան աքսորով կը պատժուին: Ե-
թէ միայն խորհուրդ ու որոշում ըրած
ըլլան և կատարումը պատրաստելիք գոր-
ծոց ձեռնամուխ եղած չըլլան, այսպի-
սի դաւադրութեան մը մասնակից կամ
խորհրդակից եղող անձինք ժամանա-
կաւոր բերդարդելութեամբ կը պատ-
ժուին: Իսկ եթէ վերոյիշեալ երկու
յօդուածոց մէջ նշանակուած ուժիւրնե-
րէն մէկը գործելու նպատակաւ դաւադ-
րութիւն մ' ընելու առաջարկութիւն
եղած և ընդունուած չըլլայ, առաջար-
կութիւնն ընողը մէկ տարիէն երեք տա-
րի բանտարկութեամբ կը պատժուի:

307. 59. Ով որ առանց կայսերա-
կան կառավարութենէն պաշտօն կամ
տէրութեան հաճոյ ըլլալիք պատճառ մ'
ունենալու՝ զօրաբաժնի մը կամ զինուո-
րաց խուճի մը, կամ նաւախուճի մը,
կամ պատերազմական նաւու մը, կամ
բերդի մը, կամ ամրութեան մը, կամ
նաւահանգստի մը և կամ քաղաքի մը
հրամանատարութիւնը վրան առնու-
ով որ զինուորական հրամանատարու-
թենէ մը հրաժարելու հրաման ընդու-

նի կայսերական կառավարութենէն և
Հնազանդի, և զինուորական հրամա-
նատար մը որ իր ձեռքին ներքե եղած
զօրքն արձակելու հրաման ընդունի կայ-
սերական կառավարութենէն, և առանց
օրինաւոր պատճառ մ'ունենալու չար-
ձակէ, մահուամբ կը պատժուի:

807. 60°. Տէրութեան կանոնաւոր
զօրքերը կամ օստիկանութեան զին-
ւորները գործածելու իշխանութիւն
ունեցող որ և իցէ անձ մը եթէ այն
զօրքերը տէրութեան հրամայած զին-
ւորադրութիւնը խափանելու գործա-
ծել ուզէ կամ այնպէս հրաման ընէ,
մշտնջեան արքայով կը պատժուի: Ե-
թէ իր այն կամքը կամ հրամանը կա-
տարուի, այսինքն՝ եթէ զօրքերն ալ
այն ապօրինաւոր հրամանին հնազան-
դելով՝ կայսերական կառավարութեան
հրամաններն իրօք խափանուին, այն
հրամանը տուող անձը մահուամբ կը
պատժուի: Իսկ այնպիսի ապօրինաւոր
հրամանի մը հնազանդող զօրաց հրա-
մանատարներն ու զլուսներն ալ ժա-
մանակաւոր շղթայակապ աշխատու-
թեամբ կը պատժուին:

807. 61°. Ով որ Տէրութեան վե-
րաբերեալ շէնքեր և ամեն տեսակ պա-
շարի մթերանոցներ կամ շտեմարաններ
դիտմամբ և չարամտութեամբ այրէ
կամ աւերէ՝ մահուամբ կը պատժուի:

807. 62°. Ով որ Տէրութեան անշարժ
կալուածներ սեփականութիւններ կամ
գրամներ և կամ հասարակութեան մը
վերաբերեալ անշարժ ստացուածներ զը-
րաւելու կամ այսպիսի ոճրագործու-
թեան մը յանդգնողները զսպել կամ
արգելուլ ուզող կայսերական զօրաց
դէմ դնելու նպատակաւ զինեալ սրի-
կաներու խումբի մը գլուխ ըլլայ կամ
այնպիսի խումբի մը մէջ հրամանատա-
րութիւն ընէ, մահուամբ կը պատժուի:

Իսկ այն խումբին անդամ եղողներէն
անոնք՝ որ հրամանատարութիւն կամ
իշխանութիւն մը ունեցած չըլլան այն
խումբին մէջ՝ և ոճիրը գործուած տե-
ղը բռնուին, ժամանակեայ շղթայակապ
աշխատութեամբ կը պատժուին:

807. 63°. Աստիճանայ յօդուածին
մէջ յիշուած սրիկաներու կամ աւա-
զակներու խումբի կամ ընկերութեան
մը հեռուէն կամ մօտէն առաջնորդու-
թիւն կամ վարչութիւն ընող, կամ
այսպիսի խումբեր կազմող, կամ այս
տեսակ խումբի մը ղէնք մթերք և գոր-
ծիք հայթայթող, կամ պարէն զրկող,
կամ այսպիսի ապստամբական խումբե-
րու հրամանատարացը կամ գլխոցը
հետ որ և է գաղանի յարաբերութիւն
կամ հաղորդակցութիւն ունեցող, և
կամ զիրենք ձանձելով և նպատակնին
ու դիտաւորութիւննին գիտնալով՝ ա-
ռանց հարկադրութեան ընտկարան կամ
ապստամբարան կամ ժողովարան տուող
անձինք՝ ժամանակեայ շղթայակապ աշ-
խատութեամբ կը պատժուին:

807. 64°. Այն անձինքը՝ որ այսպիսի
ապստամբական խումբերու մէջ գրո-
նուին առանց հրամանատար կամ խօս-
քի տէր ըլլալու, և քուղաքական ու
զինուորական իշխանութեանց առաջին
ազդարարութեանը կամ պատուէրին
անսալով մէկզի քաշուին, կամ այնու-
հետեւ ալ՝ խռովութեան տեղէն դուրս՝
առանց դիմադրութեան և առանց զէն-
քի բռնուին, ապստամբութեան կամ
խռովարարութեան պատժէն ազատ կը
մնան: Բայց եթէ անձնական ոճիր մը
կամ յանցանք մ'ունենան՝ անոր հա-
մար կը պատժուին, և այս տեսակ ան-
ձինք օստիկանութեան հսկողութեանը
ներքե կը դրուին:

807. 65°. Ապստամբաց կամ աւա-
զակաց խումբի մը անդամ եղող ան-

ձինք , եթէ այն ոճրագործութեանց սկսելէն կամ իշխանութեան կողմանէ հաշածուելէն ու փնտռուելէն առաջ իրենց մեղսակիցները կառավարութեան խնայրնեն , կամ հալածուիլ ու փրկու առիլ սկսելէ ետե զանոնք կառավարութեան ձեռքն անցունել տան , ու ընկերուն դէմ վճռուելիք պատժէն կազատին , բայց երկու տարիէն աւելի չըլլալու պայմանաւ ոտտիկանութեան հսկողութեանը ներքե կը մնան :

807 . 66° Ով որ հրապարակներու մէջ կամ բազմամարդ տեղեր ատենաբանութիւն ընելով , կամ յայտարարութիւն փակցընելով , կամ տպեալ թերթեր բաժնելով , ժողովուրդը կամ բնակիչները ուղղակի գրգռէ այն գրկսոյն մէջ նշանակուած ոճիրները դործելու , զանոնք իրօք դործողներուն պէս կը պատժուի : Բայց եթէ ըրած գրգռուութիւններն ապարդիւն մնան , մըշտընջեան աքտորով կը պատժուի :

Գ.Լ.Մ.Ի.Ս Գ .
Կաշառք .

807 . 67° Վասնք մը կամ դիտաւորութիւն մը յառաջ տանելու համար որ և իցէ անուանով տրուած կամ առնուած որ և է բան՝ կաշառք կը կոչուի : Այն անուանը ունի նաև անշարժ կամ շարժական ստացուածքի մը ըստ տեղւոյն և ըստ ժամանակին իր բուն տրժէքէն պակաս կամ աւելի գնով առնուիլն ու տրուիլը վերոյիշեալ նպատակաւ : Եւս պարագայիս մէջ վաճառման գնոյն և բուն տրժէքին մէջ եղած տարբերութիւնը կաշառք է : Վճանապէս կաշառք կը համարուին տէրութեան պաշտօնատարներուն ու գործակալներուն հարսանեաց կամ որ և իցէ տօնի առթիւ թէ՛ տրանց և թէ՛ կանանց կողմէ Փայէնտազ կամ ուրիշ

որ և իցէ անուամբ կամ պատրուակաւ տրուած մեծ կամ փոքր ընծայները : Իսկ ծառայից և սպասաւորաց տրուած սովորական պարգևները կաշառք չեն : Վճանապէս կաշառք չեն համարուիր այն թեթեաղին նիւթերը՝ ինչպէս են պտուղ , ուտելիք , ըմպելիք , որ պարգև կամ ողորմութիւն ստանալու համար կը նուիրուին , կամ բարեկամներ իրարու կը նուիրեն ՚ի նշան սիրոյ . նոյնպէս աղքատներու և ծառայներու տրուած պարգևներն ու օգնութիւնները , և կայսերական հրամանաւ տրուած ու առնուած հրապարակային և պաշտօնական ընծայները : Այն անձը՝ որ կա՛մ ուղղակի և կա՛մ իր մարդոց միջնորդութեամբ կաշառք կընդունի՝ «կաշառառու» կը կոչուի . իսկ տուողը «կաշառատու» կը կոչուի , և այս երկուքին միջնորդ եղողն ալ «կաշառանաց միջնորդ» կը կոչուի :

807 . 68° Վաշառառու մը՝ ինչ աստիճանի ու պաշտօնի տէր ըլլայ , առած կաշառքը՝ իբրև կաշառատուին կողմանէ վճարուելիք դրամական տուգանք իրմէ ետ առնուելէ ետե , նոյնչափ մ՛ալ դարձեալ իբրև պատիժ կառնուի իրմէ . և եթէ այս յանցանքն առաջին անգամ գործած ըլլայ , ժամանակեայ բերգարգելութեամբ և վեց տարի ալ պաշտօնէ զրկմամբ կը պատժուի :

807 . 69° Վաշառատու մը՝ ինչ աստիճանի ու պաշտօնի տէր ըլլայ , տրւած կաշառքը նախընթաց յօդուածին տրամադրութեանը համեմատ իբրև տուգանք ետ առնուելէ ետե՝ ինքն ալ նմանապէս ժամանակեայ բերդարգելութեամբ և վեցամեայ պաշտօնազրկութեամբ կը պատժուի՝ եթէ առաջին անգամ գործած ըլլայ այն յանցանքը :

807 . 70° Վաշառանաց միջնորդ եղող անձ մը՝ ինչ աստիճանի ու պաշտ

տօնի տէր ըլլայ, եթէ առաջին անգամ
գործած ըլլայ սոյն յանցանքը, կաշա-
ռառուին ու կաշառատուին պէս ժա-
մանակեայ բերդարդելութեամբ և վե-
ցամեայ պաշտօնադրկութեամբ կը պատ-
ժուի:

807. 71°. Աթէ կաշառատուն կամ
կաշառատուն և կամ միջնորդն աստի-
ճանաւոր և պաշտօնատար չեն, անոնք
ալ նոյն պատիժները կը կրեն:

807. 72°. Աթէ կաշառատուն կին
ըլլայ, և երկանն ալ կամակցութիւն
ունենալը հաստատուի, առած կաշառ-
նուն կրկնապատիկն իրենցմէ առնուելէ
ետև, երկուքն ալ 68 լրդ յօդուածին
համեմատ կը պատժուին: Իսկ եթէ
կինն այր չունենայ, կամ երկանը ծա-
նօթութիւն ու հաճութիւն չունենալը
ապացուցուի, կինը միայն կը պատժուի
տուգանքով և մէկ տարի բանտարկու-
թեամբ:

807. 73°. Վաշառատու և կաշառա-
նաց միջնորդ եղող կանայք ալ կաշա-
ռառու կանանց պէս կը պատժուին ըստ
նախընթաց յօդուածին, ինչպէս նաև
իրենց այրերն ալ՝ եթէ խորհրդակից
կամ կամակից գտնուին:

807. 74°. Վաշառատուութեան յան-
ցանքով մէկ անգամ դատապարտեալ
անձ մը՝ եթէ երկրորդ անգամ նոյն յան-
ցանքը գործէ, առած կաշառքին կրկ-
նապատիկն հատուցանելէ ետև, առ-
նուազն հինգ տարի բերդարդելութեան
կը դատապարտուի, և միանգամայն աս-
տիճանէ ու պաշտօնէ յաւիտեան կը զըր-
կուի:

807. 75°. Վաշառատուն և միջ-
նորդն ալ՝ եթէ կրկին անգամ նոյն յան-
ցանաց մէջ գտնուին, առ նուազն հինգ
տարի բերդարդելութեամբ և աստիճան-
ներէ ու պաշտօններէ յաւիտեան զըրկ-
մամբ կը պատժուին:

807. 76°. Աթէ կաշառքի համար
ստակ և այլն դեռ վճարուած չըլլալով՝
մուրհակ տրուած ըլլայ, կամ առանց
մուրհակի յատուկ պայմանադրութիւն
մ' եղած ըլլայ, որ կաշառատուն և
կաշառատուն կամայր հակառակ կամ
անոնց կարողութենէն վեր արգելքնե-
րու հանդիպելով կատարուած չըլլայ,
այն խոստումները կամ պայմանադրու-
թիւնները՝ դատաստանաւ ստուգուելէ
ետև՝ իրօք կատարուած կաշառառու-
թիւն ու կաշառատուութիւն կը հա-
մարուին, և հետևաբար ընդունին ալ
իրբև կաշառառու կամ կաշառատու կը
պատժուին: միայն թէ այս երկու պա-
րագայից մէջ՝ խոստացեալ կամ պայ-
մանեալ դրամին կամ ընծային արժողու-
թեանը կամ գումարին հաւասար տու-
գանք կառնուի թէ՛ կաշառքն առաջար-
կողէն և թէ՛ ընդունելու հաճութիւն
տուողէն:

807. 77°. Աթէ մէկը իր հողին, ինչ-
քը, պատիւը կամ օրինաւոր շահերն
ազատելու համար մէկուն կաշառք տա-
լու հարկադրի, և յետոյ գործը կառա-
վարութեան իմացընէ, տուած ստակը
կամ ընծան իրեն ետ կը տրուի, և
առնող անձն ալ իրբև կաշառառու կը
պատժուի: Իսկ եթէ այսպէս բռնի
կաշառք տուող անձ մը՝ բունութեան
և երկիւղի պատճառները դադրելէ ե-
տև՝ գործը աղերսագրով մը Սեծ Ա-
պարքոսին չյայտնէ՝ եթէ ինքը Ա. Պօ-
լևս կը գտնուի, կամ գաւառի կուսա-
կալին և կամ գաւառական ժողովին
չյայտնէ՝ եթէ գաւառները կը գտնուի,
և եղելութիւնն ուրիշ կողմէ իմացուի,
այնպիսին իրբև կաշառատու կը պատ-
ժուի:

807. 78°. Տէրութեան պաշտօնատար
մը՝ եթէ իր ձեռնհասութենէն կախ-
եալ օրինաւոր գործի մը կարգադրու-
թեանը համար ստակ կամ կաշառք ու-

զէ և գործին աւելն ալ կառավարու
թեան խնայրնելով ապացուցանէ , պաշ-
տօնատարն իբրև կաշառառու պատ-
ժուելէ զատ , ուզած ստակին կամ կա-
շառքին հաւասար գումար մը իրմէ տու-
գանք առնուելով՝ կէսը ամբաստանողին
վարձ կը տրուի , և միանգամայն գործն
ալ արդարութեամբ կը տեսնուի :

307 . 79° . Աթէ մէկը՝ որ և է գործի
համար իրեն առաջարկուած կամ տրը-
ւած կաշառքը , առնելէն առաջ կամ
ետքը , ուրիշ կողմէ գեռ չխնայուած ,
առ առաւելն մինչև երկու ամիս մեծ
Նպարքոսին կամ գտնուած դաւառին
ամենէն մեծ իշխանութեան խնայրնէ ,
և եթէ ստակ առած է նէ յանձնէ ,
տէրութեան հաւանութեանն ու գո-
հութեանը արժանի կըլլայ . իսկ կաշա-
ռատուն՝ եթէ կաշառքը գեռ վճարած
ալ չըլլայ , առաջարկած գումարին հա-
ւասար տուգանք տալէ ետև , նախըն-
թաց յօդուածոց մէջ որոշեալ պատիժ-
ներն ալ կը կրէ :

307 . 80° . Տէրութեան եկամուտնե-
րն աճուրդով վաճառելու կամ վար-
ձելու պաշտօնի մէջ գտնուող ո և է
անձ մը , եթէ ուրիշ հետամուտներ
գտնուած ժամանակ՝ կաշառք առնելով
կամ ուրիշ որ և իցէ անձնական շա-
հուց նկատմամբ՝ վար դնով աճրդէ կամ
մէկուն վարձէ , սոյն օրինագրքին շոր-
քորդ գլխոյն ՏՁրդ յօդուածին համե-
մատ իբրև տէրութեան ապրանքի գող
կը պատժուի :

307 . 81° . Աթէ մէկը կաշառքէն ա-
ւելի ծանր պատժոց արժանի ոճիր մը գոր-
ծել տալու համար ուրիշ կաշառք տայ ,
կաշառառուն այսինքն կաշառքն առնե-
լով այն ոճիրը գործողը՝ առած ստակին
հաւասար տուգանք վճարելէ ետև , թէ՛
ինքը , թէ՛ կաշառատուն և թէ՛ միջնոր-
դը՝ եթէ կայ՝ նոյն ոճրին դէմ ներկայ

օրինագրքիս մէջ վճռուած պատիժները
կը կրեն :

ԳՆՈՒԽ Դ .

Տէրութեան բնից և դրամաց գողու-
քիւն : — Զօրաքաղութիւն .

307 . 82° . Ալ որ տէրութեան վերա-
բերեալ դրամ կամ ապրանք գողնայ ,
գողցած դրամին կամ ապրանքին կրկ-
նապատիկն իրմէ ետ առնուելէ ետև ,
առ նուազն հինգ տարի բերդարդելու-
թեամբ , և տէրութեան պաշտօններէ
ու աստիճաններէ ալ յաւիտեան զըրկ-
մամբ կը պատժուի :

307 . 83° . Ալ որ տէրութեան հաշ-
ուին համար որ և իցէ ապրանք գնելու
կամ վաճառելու կամ շինելու պաշտօն
ունենալով , այն ապրանաց գնմանը , վա-
ճառմանը , գնոյն , քանակութեանը կամ
որակութեանը մէջ որ և է խարդախու-
թիւն խառնելով գողութիւն ընէ ,
նախընթաց յօդուածին համեմատ կը
պատժուի :

307 . 84° . Ե յա տեսակ գողերը՝ թէ
և տէրութեան պաշտօնի և աստիճանի
տէր անձինք չըլլան , դարձեալ նախըն-
թաց յօդուածոց մէջ նշանակուած պա-
տիժները կը կրեն :

307 . 85° . Տէրութեան պաշտօնատար-
ներէն որոնք որ տէրութեան Սերկիներ
կամ մուրհակներ կոտրելու համար դը-
րամ ընդունին տէրութեան վրայ առ-
նելիք ունեցողներէն , կամ անոնց առ-
նելիքը բուսցընել տալու համար դրամ
կամ ուրիշ ընծայներ ընդունին , ա-
ռած ստակին կամ ընծային իրենցմէ
ետ առնուելէ ետև՝ ժամանակեայ բեր-
դարդելութեամբ կը պատժուին : Նոյն
պատիժները կը կրեն նաև տէրութեան
պաշտօնատարներուն ծառայութեանը
մէջ գտնուող կամ անոնց ազգակա-
նութիւն կամ վերաբերութիւն ունե-

ցող անձինք՝ որ անոնց հաճութեամբը
Մերկի կտարեն, ինչպէս նաև այս զեղ
ճուճներուն աչք գոցող կամ նպաս
տող պաշտօնատարները :

307. 86. Տէրութեան որ և է կար
գի պաշտօնատար մը, որ իր վարչու
թենէն կախում ունեցող նիւթերու
շինութեան կամ փոխադրութեան դոր
ճաճուած աշխատաւորներուն յատկաց
եալ վարձքը կամ այն նիւթերուն գի
նը ամբողջ չվճարէ կամ պակաս վճա
րէ, կամ գործաւորներն անվարձ և
ձրի ծառայեցրնէ, այս կերպով շահած
ստակին կրկնապատիկը իրմէ առնուե
լով, կէսը զրկեալներուն կը տրուի,
կէսն ալ իրրև տուգանք վար կը դրուի :
Միանգամայն ժամանակեայ բերդար
գելութեամբ կը պատժուի :

307. 87. Տէրութեան որ և է կար
գի պաշտօնատար մը՝ որ երկրին պահ
պանութեան և արոց հաւաքման յատ
կացեալ ոստիկանութեան զինուորները
որոշեալ թիւէն պակաս գործածելով՝
ամբողջին ինկած ամսականն ստանայ,
կամ զանոնք իրենց բուն պաշտօնէն
հանելով իր տանը ծառայութեանը
գործածէ, կամ իր սեփական ծառայ
ները ոստիկանութեան զինուորաց տու
մարին մէջ անցունելով զինուորի ամ
սական ստանայ և անոնց վճարէ, թէ՛
իր սեփական ծառայութեանը գործա
ճած զինուորաց համար, և թէ՛ զինուո
րի անուկով իր սեփական ծառայներուն
համար ստացած դրամներուն կրկնապա
տիկն իրմէ առնուելէ ետև՝ ժամանակ
եայ բերդարգելութեամբ կը պատժուի :

307. 88. Տէրութեան պաշտօնատար
ներն և ուրիշ որ և է անձինք որ տէ
րութեան եկամտից աճուրդին և վար
ձակալութեանը վերաբերեալ տրամադ
րութեանց հակառակ վարուին, կամ
այն օրինաց հակառակ վիճակի և ըն

թացքի մէջ գանուին, իրենց պաշտօ
նէն կը ձգուին և մէկ տարիէն երկու
տարի բանտարկութեամբ կամ երկուքէն
երեք տարի աքսորով կը պատժուին :
Միանգամայն տէրութեան դանձուն
հասուցած վնասին ալ հատուցանելու
կը պարտաւորին :

307. 89. Տէրութեան ամեն կարգի
և աստիճանի պաշտօնատարներ, որ ի
րենց վարչութեանը կամ հսկողութեանը
յանձնուած մեծ կամ փոքր գործոց մէջ
տէրութեան վերաբերեալ պարենից կամ
կարասեաց գնմանը կամ վաճառմանը
վրայ թէ՛ յայտնապէս, թէ՛ ՚ի ճաճուկ,
թէ՛ ուղղակի թէ՛ ուրիշի միջնորդու
թեամբ և թէ՛ ընկերակցութեամբ իրենց
փաստակին համար շահ ընեն, կամ այն
նիւթերուն մատակարարութիւնը ա
ճուրդով իրենց վրայ առնուն, կամ ա
ճուրդով իր վրայ առնող մատակարարի
մը հետ ընկերակցին, իրենց պաշտօնէն
հանուելով՝ մէկ տարիէն երկու տարի
աքսորով կը պատժուին : Աթէ պաշտօ
նատար մը այս կերպ առուծախերու
մէջ բօսիսիօն ընդունի, կամ դրամոց
փոխանակութեան վրայ շահ ընէ, պաշ
տօնէ զրկուելէ ետև՝ մէկ տարիէն եր
կու տարի բանտարկութեամբ կամ եր
կուքէն երեք տարի աքսորով կը պատ
ժուի :

307. 90. Քաղաքային կամ դան
ձային վարչութեան վերաբերեալ պաշ
տօնատարները՝ որ ինչ և իցէ ճանբով
տէրութեան ստակներն իրենց վրայ ան
ցունեն, կամ այս տեսակ յանցանք մը
ուրիշի մը դիւրացրնեն, իրենց պաշտօ
նէն հանուելէ ետև, երեք ամսէն երկու
տարի բանտարկութեամբ կամ վեց ամ
սէն երեք տարի աքսորով կը պատժուին :

307. 91. Այն անձինքը՝ որ տէրու
թեան ցամաքային կամ ծովային զօրաց
համար պաշար կամ կարասի մատակա

բարեւոյ պաշտօն ընդունին կամ վա-
նին առնուն, և իրենց պահասութեամբ
բը կամ կամուր յանձնառութիւննին
կամ խոստումնին չկատարեն, առած
թերհաշիւ ստակնին ետ տալէ ետև,
նոյն ստակին քառորդին չափ ալ տու-
գանք կը վճարեն:

307. 92°. Աթէ պաշարաց մատակա-
րարութիւնը վերաբերենէ կամ ետ ձը-
գել տալու համար տէրութեան պաշ-
տօնատարներ կամակից կամ օժանդակ
դանուին յանցաւորաց, երեք տարի
բանտարկութեամբ կը պատժուին:

307. 93°. Աթէ պայմանագրու թեամբ
խոստացուած կամ որոշուած գնուո-
րական պաշարներու կամ կարասեաց
մատակարարութիւնն առանց օրինաւոր
պատճառներու ժամանակին չկրնայ կա-
տարուիլ, կամ անոնց տեսակին, որա-
կութեանը կամ քանակութեանը մէջ
խարդախութիւն եղած ըլլայ, յանցա-
ւորները կը տուժեն, և այն տոյժին քա-
ռորդին չափ ալ տուգանք կը վճարեն:



Գլ. Արիւ Ե.

Իշխանութեան զեղծում: — Տերութեան
պաշտօնի մէջ պարտազանցութիւն.

307. 94°. Ամեն տեսակ դատաստա-
նի մէջ՝ անխօսի ամեն մարդ՝ արդա-
րութեան ծառայելու համար՝ թէ՛
բանիւ և թէ՛ գրով դատաստանական
ասեաններուն կամ ժողովներուն տեղե-
կութիւն տալու արտօնութիւն ունե-
նալով, այս տեսակ տեղեկութիւններէ
դուրս, որք իբրև կարծիք կամ նշանք
կրնդունուին, եթէ տէրութեան պաշ-
տօնատար մը դատեալ կնդմանց մէկուն
նպատակով կամ հակառակ հրաման մը
միջնորդութիւն մը կամ ազաւանք մը
ուղղէ դատաստանատան մը կամ ժողովի
մը, ուղղակի կամ անուղակի, բանիւ.

կամ գրով, այն պաշտօնատարը և անոր
հրամանը կամ միջնորդութիւնը ընդու-
նող և ըստ այնմ վճիռ տուող դատա-
րանը կամ ժողովը՝ գործին ծանրու-
թեանը համեմատ ներքոյ նշանակեալ
պատիժները կը կրեն:

307. 95°. Աթէ վերոյիշեալ միջա-
մրտութիւնն ընողը տէրութեան պաշ-
տօնատար մ'ըլլայ որ իր իշխանութեան
զօրութեամբը ճնշում մ'ի գործ դրած
ըլլայ, և դատարանը կամ ժողովն ալ ընդ-
դիմանալով կառավարութեան իմացընէ,
պաշտօնատարը պաշտօնէն զրկուելով կը
պատժուի: Իսկ եթէ միջամտութիւնը
պարզ խնդրանաց կամ ազաւանաց ձե-
ւով ըլլայ, դատարանին կամ ժողովին
կողմէն չընդունուելով կառավարու-
թեան իմաց տրուած ատեն, յանցաւորը
տասնէն յիսուն Մէծիաիէ ոսկի տու-
գանք տալով կը պատժուի:

307. 96°. Աթէ այս տեսակ միջամ-
տութեան մը զօրութեամբ անիրաւ վը-
ճիռ մը տրուի դատի մը մէջ, այն վճիռը
տալու հրաման ընող պաշտօնատարը՝
պաշտօնէն զրկուելէ զատ՝ երեք ամսէն
տարի ու կէս բանտարկութեամբ կամ
վեց ամսէն երեք տարի աքսորով կը
պատժուի: Աթէ անիրաւ վճիռը պարզ
խնդրանօք կամ ազաւանօք տրուած ըլ-
լայ, խնդիրը կամ ազաւանքն ընող անձը
տուգանք վճարելէ զատ՝ մէկուկէս ա-
միսէն երեք ամիս բանտարկութեամբ
կամ երեք ամսէն վեց ամիս աքսորանօք
կը պատժուի:

307. 97°. Աթէ դատարանը կամ ժո-
ղովը դատի մը մէջ իրեն ուղղուած հը-
րամանը կամ խնդրուածքը կառավա-
րութեան չիմացընէ, դատաւորը կամ
նախագահը պաշտօնէն կը ձգուի, թէ
և այն հրամանը կամ միջնորդութիւնն
ընդունած և իգործ դրած չըլլայ:

307. 98°. Դատարանի մը կամ ժո-

ըովի մը դատաւորը կամ նախագահը՝ որ իրեն եղած հրամանը խնդիրը կամ ազաւանքը կառավարութեան չլմացը ներլով՝ անխաւ վճիռ մը տայ, վեց տարի պաշտօնէ զրկուելով և երեք տարի արտորով կը պատժուի: Իսկ անդամները պարզապէս պաշտօնէ կը զրկուին մինչև վեց տարի: Ասկէ զատ՝ թէ՛ դատաւորը կամ նախագահը՝ և թէ՛ անդամները յաւիտեան չեն կրնար դատարանի կամ ժողովի մը մէջ պաշտօն վարել:

307. 99. Որ և իցէ կարգի կամ ատիճանի պաշտօնատար մը՝ որ ուղղակի կամ անուղղակի իր ազդեցութիւնը կամ իշխանութիւնը բանեցընելով՝ տէրութեան հրամաններուն կատարմանը կամ օրինաւոր տրոց և հարկաց հաւաքմանը արգելք ըլլայ, ժամանակեայ բանտարկութեամբ կը պատժուի:

Աթէ պաշտօնատարներն իրենց մեծին հրամանաւ ակամայ հարկադրին այսպիսի դործ մ'ընելու, վերոյիշեալ պատիժներէն ազատ կը մնան, և միայն հրամանը տուող մեծաւորը կը պատժուի. և եթէ այն հրամանները ծանրագոյն պատժոց արժանի ոճրագործութեանց պատճառ ըլլան, այն ծանրագոյն պատիժները կը վճռուին ու կը դործադրին:

307. 100. Առսակայները (վալի), կառավարիչները (միւթէսարրըֆ), տեղակայները (գայմադամ), տոււարակայները (տէֆթէրտար), դատաւորները, գանձակայները (մալ միւտիրի), նահանգապետները (միւտիր)՝ եթէ իրենց իշխանութիւնը բանեցուցած երկիրներուն կամ տեղերուն մէջ յայտնապէս կամ ծածուկ, ուղղակի կամ ուրիշ միջնորդութեամբ և կամ որ և է տեսակ ընկերակցութեամբ՝ ցորենի, արմրեաց և ուրիշ պարէններու առուտուր ընեն և սասկ շահիլ ուզեն, որ բացարձակապէս արգիւտած է իրենց,

պաշտօնէ կը զրկուին, և 25էն 1000 Մէճիտիէ ոսկի տուգանքով կը պատժուին: Իսկ եթէ այն պաշտօնատարներն այն երկիրներուն մէջ կալուածներ կամ սեփականութիւններ ունենան, անոնց արդիւնքն այս տրամադրութեան ներքև չի յնար:

307. 101. Տէրութեան որ և է պաշտօնատար մը՝ որ առանց օրինաւոր կամ տէրութեան հաճոյ ըլլալիք պատճառի՝ արքունական հրովարտակներու, եպարքոսական նամակներու կամ կայսերական կառավարութեան կողմանէ արուած որ և իցէ հրամաններու հրատարակումը եւ ձգէ կամ ուշացընէ, պաշտօնէն կը զրկուի: Աւ եթէ իր այս վարկուիքը տէրութեան կամ երկրին շահուցը վնաս պատճառէ, այնպիսի վնասուց պատճառեղովներուն համար սահմանուած պատիժներն ալ կը կրէ:

307. 102. Տէրութեան պաշտօնատար մը՝ որ առանց օրինաւոր պատճառի՝ իր պաշտօնին վերաբերեալ դործի մը վրայ իր մեծին հրամանները կատարելու թուլութիւն կամ անհոգութիւն ընէ, իր մէկ ամսուան թոշակին հաւասար տուգանք տալով կը պատժուի: Աթէ իր մեծին հրամանները չկատարելը անհնազանդութենէ յառաջ գայ, պաշտօնէն կը զրկուի: Աւ եթէ իր այս անհոգութենէն կամ անհնազանդութենէն տէրութեան կամ երկրին շահուցը վնաս գայ, այնպիսի վնասուց պատճառ եղովներուն դէմ սահմանուած պատիժներն ալ կը կրէ:

ԳԼՈՒԽ 2:

Տէրութեան պաշտօնատարաց կողմանէ մասնաւորաց դէմ բռնութիւնք եւ հարստահարութիւնք:

307. 103. Ղառաւստանական ատեանի կամ ժողովի մը անդամ եղող

կամ ուրիշ որ և է պաշտօնատար մը՝ որ ամբաստանեալ մը խոստովանեցրնելու համար տանջելու հրաման ընէ, կամ ինքնին ի գործ դնէ, ժամանակաւ որ բեր գարգելութեամբ և յաւիտեան պաշտօնէ պահմամբ կը պատժուի: Աթէ տանջողներն ստորակարգեալ պաշտօնատարներ ըլլան և իրենց մեծին հրամանաւր գործեն, վերոյիշեալ պատիժները մեծը կը կրէ: Աթէ պատահի որ տանջանք կրող անձը սոյն պատճառաւ մեռնի կամ իր անդամոց մէկը վնասուի և խեղանդամ մնայ, յանցաւոր պաշտօնատարն իբրև մարդասպան կամ վիրաւորիչ կը պատժուի:

307. 104. Ղատաստանական ատենի կամ ժողովի մը անդամ եզող կամ ուրիշ որ և է պաշտօնատար մը՝ որ յանցաւորի մը օրինաց սահմանածէն աւելի ծանր պատիժ մը տալ հրամայէ կամ ինքնին ՚ի գործ դնէ, վեց ամսէն երեք տարի բանտարկութեամբ կը պատժուի, և զատաստանական ատեններու կամ ժողովներու մէջ յաւիտեան չգործածուելու պայմանաւ պաշտօնէն կը զրկուի:

307. 105. Որ և է պաշտօնատար մը՝ որ քաղաքային կամ զինուորական օրինաց և սատիկանութեան կանոնաց նըշանակած պարագաներէն դուրս, և նոյն օրինաց և կանոնաց հրամայած սրայմաններուն և ձևերուն միտ չդնելով՝ բռնութեամբ մանաւորի մը բնակարանը մտնելու ըլլայ, վեց ամսէն երեք տարի բանտարկութեամբ կը պատժուի: Բայց եթէ իր մեծին հրամանաւն շրած ըլլալը հաստատուի, ինքը պատժէ ազատ կը մնայ, և սոյն պատիժն իր մեծը կը կրէ: Տերութեան պաշտօնատար չեզոք որ և է անձ մ'ալ եթէ սպառնալեօք կամ բռնութեամբ մանաւորի մը բնակարանը մտնէ, մէկ շաբաթէն վեց ամիս բանտարկութեամբ կը պատժուի:

307. 106. Օ ինուորական հրամանատարները, սատիկանութեան տեսուչները կամ զինուորները, և մարդիկ դատաստանի տանող գործակալները (միւ պաշտը), եթէ իրենց պաշտօնը կամ մեծերնուն հրամանները կատարած ժամանակ, օրինաց և կանոնաց որոշած պայմաններուն ու ձևերուն հակառակ պատուոյ գաչելու կամ մարմնական ցաւ պատճառելու կերպով մանաւորաց վրայ բռնութիւն բանեցրնեն, գործին ծանրութեանը համեմատ մէկ շաբաթէն մէկ տարի բանտարկութեամբ կը պատժուի:

307. 107. Տերութեան որ և է կարգի պաշտօնատար կամ աստիճանաւոր մը՝ որ անշարժ կամ շարժական ստացուած մը տիրոջը կամքին հակառակ դնէ, կամ անիրաւ պահանջողութեամբ մը զայն դրուէ, կամ բռնութեամբ վաճառել տայ, այն ապրանքը ետ տալէ, կամ եթէ իրօք և ամբողջապէս կեցած չէ, անոր արժէքը հատուցանելէ ետև, իր յանցանաց ծանրութեանը համեմատ վեց ամսէն երեք տարի աքսորով կը պատժուի, և աստիճանէ ու պաշտօնէ ալ յաւիտեան կը զրկուի:

307. 108. Վարչութեան մը գլուխ գտնուող որ և է կարգի պաշտօնատարները և ասոնց հրամանին ներքև դրուած պաշտօնատարները կամ գործակալները և անոնց ծառայութեանը մէջ գտնուող մարդիկը, նոյնպէս տէրութեան այլ և այլ հասոյթները վարձակալութեամբ վրանին առնողներն և անոնց գործակալները՝ տէրութեան հարկերուն, տասանորդներուն, տուրքերուն և ուրիշ հասու թից հաւաքման մէջ որոշեալ չափէն աւելի բան մը առնուն և ընդունին, նոյն վարչութեան գլուխը զբռնող պաշտօնատարներն ու վարձակալները ժամանակեայ բերդարգելու

Թեամբ կը պատժուին . իսկ ստորակարգ
գեալ պաշտօնատարներն ու գործա-
կալները վեց ամսէն երեք տարի բան-
տարկութեամբ կը պատժուին : Մի-
անգամայն անիրաւութեամբ առնուած
աւելի ստակները ետ տալու և անոնց
գումարին հաւասար ալ տուգանք տա-
լու կը դատապարտուին :

307. 109. Տէրութեան որ և է կար-
գի պաշտօնատար մը՝ որ ըստ օրինաց
որոշեալ տուգանքէն զատ՝ մեծ կամ
փոքր ստակի գումար մը կամ ուրիշ
որ և է բան մը իբրև տուգանք առնու ,
կամ օրինօք սահմանեալ տուգանքէն ա-
ւելի գումար մ'ստանայ , և կամ վճար-
ուելիք տուգանքը դատաստանաւ հրա-
մայուելէ առաջ առնու , առած գու-
մարին կրկնապատիկն իրմէ առնուելով՝
կէսը տիրոջը կը տրուի . միանգամայն
ինքն ալ իբրև կաշառառու կը պատ-
ժուի :

307. 110. Տէրութեան պաշտօնա-
տարներէն կամ գաւառաբնակ ժողովրդ-
դոց գլխաւորներէն որոնք որ օրինօք
սահմանուած և կայսերական կառավա-
րութենէն հրամայուած կամ ժողովրդ-
եան օգտին համար անհրաժեշտ ճանչ-
ուած ձրի աշխատութիւններէ զատ՝ ու-
րիշ որ և է գործերու ձրիաբար մար-
դիկ ծառայեցրնեն , այն մարդոց աշխա-
տութեան վարձքը տեղւոյն գնոյն հա-
մեմատ վճարելու դատապարտուելէն
զատ՝ իրենց պաշտօնէն կը ձգուին , և
յանցանքին ծանրութեան համեմատ վեց
ամսէն եւ՛ք տարի աքսորով կը պատ-
ժուին :

307. 111. Տէրութեան որ և է կար-
գի և աստիճանի պաշտօնատարներն և
անոնց մարդիկը , նոյնպէս բարձրագոյն
իշխանութեան հրամանաւ մարդ բերե-
լու կամ գործ մը կատարելու զրկուած
գործակալները (միւլպաշոր) , արքունի

բանակաց կամ ոստիկանութեան պաշ-
տօնակալներն ու զինուորները , որ իրենց
ճանբուն վրայ գտնուող բնակչաց տու-
ներն իջլանելով՝ բռնութեամբ և ձրի
ուտելիք և խաբ առնուն , անոնց ամ-
բողջ գինը տէրէրուն վճարելու դատա-
պարտուելնէն զատ , իրենց պաշտօնէն
ալ կը ձգուին և մէկ շաբաթէն մէկ ա-
միս բանտարկութեամբ կը պատժուին :
Եթէ այս բռնութիւնն ընողները խմբո-
վին ուղևորող զօրքեր ըլլան , առնուած
բաներուն գինը անոնց հրամանատարնե-
րէն առնուելով տէրերուն վճարուելէ
զատ , յիշեալ հրամանատարները կամ
պաշտօնակալները պաշտօնէ կը ձգուին
և վեց ամսէն երեք տարի բանտարկու-
թեամբ կը պատժուին :


Գ. Լ. ՈՒՅ Է

Անհնազանդութիւն , ընդդիմութիւն եւ բռնամարտ
տեքութեան պաշտօնատարներու կամ իշխա-
նութեան գործակալներու .

307. 112. Եթէ մէկը՝ դատաստանի
կամ ժողովի մը անդամներու՝ կամ
ուրիշ որ և է պաշտօնատարներու՝ ի-
րենց պաշտօնին կատարմանը մէջ կամ
կատարման առթիւ , անոնց պատուոյն
և արժանեացը դպչելիք թշնամանք մ'
ընէ , կամ նախատէ և կամ սպառնայ ,
մէկ շաբաթէն վեց ամիս բանտարկու-
թեամբ կը պատժուի : Եթէ՝ այս թրշ-
նամանքը կամ նախատիքը ատեանին
կամ ժողովին դատ վարած ժամանակը
գործուի , վեց ամսէն մէկ տարի բան-
տարկութեամբ կը պատժուի :

307. 113. Տէրութեան կանոնաւոր
զօրաց և ընդհանրապէս իշխանութեան
գործադիրներու դէմ իրենց պաշտօնին
կատարման ժամանակ կամ նոյն առթիւ
պատիւնուն և արժանեացը դպչելիք
խօսքով գործով կամ սպառնալեօք
թշնամանք ընողը՝ մէկէն երեք Մէծի-
աիտ ոսկի տուգանք կը վճարէ : Եթէ

11/16
32



Թշնամանքը զորաց պաշտօնակալներու
կամ ոստիկանութեան հրամանատար-
ներու դէմ ըլլայ, մէկ շաբաթէն մէկ
ամիս բանտարկութեամբ կը պատժուի :
Իսկ եթէ Թշնամանաց հետ զէնք ալ
գործածուի, անպատճառ վեց ամիսէն
երկու տարի բանտարկութեամբ կը
պատժուի :

307. 114. Եթէ ուրիշ մէկը տէ-
րութեան զինուորի մը կամ ոստիկա-
նութեան գործակալի մը իւր պաշտօնը
կատարած ժամանակ կամ նոյն առթիւ
զարնէ՝ թէ և առանց զէնք գործածե-
լու և վերաւորելու, վեց ամիսէն երկու
տարի բանտարկութեամբ կը պատժուի :

307. 115. Եթէ մէկը՝ տէրութեան
որ և իցէ պաշտօնատարներու կամ իշ-
խանութեան գործադիրներու կամ
վարչութեան գործակալներու՝ իրենց
պաշտօնին կատարման ժամանակ կամ
նոյն առթիւ զարնելով՝ վերաւորէ կամ
հիւանդանալու պատճառ ըլլայ, յան-
ցանքին ծանրութեանը համեմատ օրի-
նօք սահմանեալ պատժոյն կրկնապա-
տիկը կը կրէ :

307. 116. Ուրիշ մէկը՝ դատաս-
տանի մը կամ ժողովի մը կանոնաւորա-
պէս կանչուելէ ետեւ՝ առանց օրինաւոր
պատճառ մ'ունենալու չուզէ ներկա-
յանալ, մէկ արծաթ Մէճիտիէէն հինգ
Մէճիտիէ ոսկի տուգանքով կը պատ-
ժուի : Սոյն անհնազանդութիւնը քա-
նի անգամ որ կրկնուի, տուգանքն ալ
նոյնչափ կը բազմապատկի :

Գ. ԱՌԻՍ Ը .

Բանտարկեալ փախչանել :—Եղեռնա-
գործներ պահել .

307. 117. Եթէ անգամ որ բան-
տարկեալ մը փախչի, զայն բռնել տանե-
լու պաշտօն ունեցող զինուորները՝ պաշ-
տօնակալները կամ գործակալները (միւ-

պաշտը), ինչպէս նաև անոնց պահպա-
նութեանը սահմանեալ պահապան զին-
ւորներն ու բանախ գործակալները, բան-
տապան, պահնորդ, դռնապան, և այլն,
եթէ անհոգութիւն ըրած ըլլան, մէկ
շաբաթէն մէկ ամիս բանտարկութեամբ
կը պատժուին : Իսկ եթէ դիտմամբ
փախուցած ըլլան, փախչողին յանցանաց
ծանրութեանը համեմատ վեց ամիսէն
երեք տարի բանտարկութեամբ կը պատ-
ժուին :


307. 118. Բանտարկելոց պահպա-
նութեան պաշտօն չունեցող անձ մը
եթէ բանտարկեալ մը փախչանելու միջոց
և դիւրութիւն մատակարարէ, մէկ շա-
բաթէն վեց ամիս բանտարկութեամբ
կը պատժուի :

307. 119. Բանտարկելոց պահպա-
նութեան պաշտօն ունեցող կամ չու-
նեցող անձինք, եթէ անոնց փախուստը
յաջողեցնելու համար զէնք և ուրիշ
բռնական միջոցներ մատակարարած ըլ-
լան, ժամանակեայ շղթայակապ աշխա-
տութեամբ կը պատժուին :

307. 120. Երբոր՝ բանտարկելոց պահ-
պանութեան պաշտօն ունեցող անձինք
ստակ առնելով բանտարկեալ մը փախ-
չնեն, եթէ բանտարկեալը մահուամբ
կամ մշանջենաւոր շղթայակապ աշխա-
տութեամբ և կամ մշանջեան բերդար-
գելութեամբ պատժուելիք յանցաւոր
մ'է, առած ստակնուն կրկնապատիկ
տուգանք հատուցանելու դատաւարա-
ւելնէն ետեւ՝ ժամանակեայ շղթայա-
կապ աշխատութեամբ կը պատժուին :
Իսկ եթէ փախչողն աւելի թեթև պատ-
ժոյ ենթակայ ըլլալիք յանցաւոր մ'է,
կաշառառութեան դէմ սահմանեալ
պատիժը կը կրեն :

307. 121. Ով որ բանտէն փախած
կամ եղեռնագործութիւն ըրած մարդ
մը դիտութեամբ իր տանը մէջ պահէ,

վեց ամսէն երկու տարի բանտարկու
թեամբ կը պատժուի : Սոյն պատժէն
ազատ կը մնան պահուած եղեռնագոր-
ծին ամուսինը , եղբայրներն ու քոյրե-
րը , ծնողքն ու մերձաւոր ազգականները :



ԳԼՈՒԽ Թ .

ԿՅԻՔ ԽՂԵԼ :— Պահուած պաշտօնական
բուրքեր եւ աւանդներ վերցընել .

307 . 122° Արբոր տեղւոյ մը վրայ
թուղթերու կամ կարասիներու պահ-
պանութեան համար բարձրագոյն իշխա-
նութեան կամ դատաստանական ատենի
մը հրամանաւ զարնուած կնիքը խզուի
կամ բացուի , պահապանները՝ եթէ
կան՝ իրենց անհոգութեանը համար հին-
գէն մինչև յիսուն Մէճիտիէ ոսկի տու-
գանքով կը պատժուին : Աթէ ոճ-
րագործութեամբ ամբաստանեալ մար-
դու մը սեփական եղած թուղթերու
և կարասեաց վրայ զարնուած կնիքը
խզուի , անհոգ պահապանը՝ ոճրին ծան-
րութեանը համեմատ՝ երեք ամսէն մէկ
տարի բանտարկութեամբ կը պատժուի :

307 . 123° Ով որ եղեռնագործու-
թեան վերաբերեալ թուղթերու կամ
կարասեաց վրայ զարնուած կնիքը խզէ ,
վեց ամսէն մէկ տարի բանտարկութեամբ
կը պատժուի : Աթէ խզողը նոյն իսկ
պահապանն ըլլայ , մէկ տարիէն երեք
տարի բանտարկութեամբ կը պատժուի :

307 . 124° Աթէ ուրիշ որ և է պատ-
ճառաւ տեղւոյ մը կամ կարասեաց կամ
թուղթի վրայ զարնուած կնիք մը խզ-
ուի , յանցաւորը մէկ շաբաթէն վեց
ամիս բանտարկութեամբ կը պատժուի .
և եթէ խզողը նոյն իսկ պահապանն ըլ-
լայ , վեց ամսէն մէկ տարի բանտարկու-
թեամբ կը պատժուի :

307 . 125° Կնիք խզելով գործուած
օր և է գողութիւն , գոց տեղ բանալով

կամ բանիք կոտրելով գործուած գո-
ղութեան պէս կը պատժուի :

307 . 126° Աթէ տէրութեան վե-
րաբերեալ կարևոր թուղթեր , տու-
մարներ , դատաստանական գրութիւն-
ներ , պահուած տեղէն կամ պահ-
պանելու պաշտօն ունեցող անձանց
քովէն վերցուի , գողցուի կամ ջնջուի ,
պահպանելու պաշտօն ունեցող անձը ,
եթէ անհոգութիւն ըրած ըլլալը ըս-
տու գուի , ամսական թոշակին հաւա-
սար տուգանք վճարելով և մէկ շաբա-
թէն երեք ամիս բանտարկութեամբ կը
պատժուի :

307 . 127° Ով որ նախընթաց յօդ-
ւածին մէջ յիշուած գողութեան կամ
ջնջման յանցանքը գործէ , վեց ամսէն
երկու տարի բանտարկութեամբ կը
պատժուի : Աթէ նոյն իսկ աւանդա-
պահն ըլլայ այս յանցանքը գործող , իր
ամսական թոշակին հաւասար տուգանք
տալով և մէկ տարիէն երեք տարի
բանտարկութեամբ կը պատժուի :

307 . 128° Աթէ կնքոյ խզումը և
թուղթերու բարձումը կամ ջնջումը՝
աւանդապահին վրայ բռնութիւն բա-
նեցընելով գործուի , յանցաւորները շղ-
թայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուին :

307 . 129° Թղթատարութեան կամ
այս տեսակ միջնորդներու յանձնուած
նամակներ բացող կամ բանալ տուող
տէրութեան պաշտօնատարները կամ
գործակալները՝ մէկ Մէճիտիէ ոսկիէն
հինգ Մէճիտիէ ոսկի տուգանքով և
մէկ ամսէն երեք տարի բանտարկու-
թեամբ կը պատժուին : Այսպիսի գոր-
ծի մը ծանօթութիւն ունեցող և աչք
գոցող թղթատարութեան գործակալ-
ներն ալ նոյն պատիժները կը կրեն :

ԳԼՈՒԽ Ժ .

Առանց իրաւանց պաշտօնական դէմք
առնուլ .

307 . 130 . Ո՛վ որ առանց իրաւանց
կամ առանց կայսերական կառավարու-
թեան հրամանին՝ տէրութեան քաղա-
քական կամ զինուորական պաշտօնա-
տարի դէմք առնուլ , կամ այն պաշտօն-
ներուն վերաբերեալ գործեր կատարէ ,
երեք ամսէն պակաս չըլլալու . կերպով
բանտարկութեամբ կը պատժուի : Եւ
եթէ այս գործն ընողը միանգամայն
սուտ Ֆէրման , եպարքոսական նամակ
կամ հրամանագիր կամ ուրիշ պաշ-
տօնական կեղծ գրութիւններ ցուցը-
ցած կամ հրատարակած ըլլայ , ԺՆՐԴ
գլխոյնմէջ խարդախութեան դէմ սահ-
մանուած պատիժն ալ զատ կը կրէ :

307 . 131 . Ո՛վ որ առանց պատուա-
նշան ստացած ըլլալու պատուանշան
կրէ , կամ աստիճանէն աւելի բարձր
աստիճանի մը յատկացեալ պաշտօնա-
կան զգեստ հագնի , և կամ առանց
աստիճան և տէրութեան պաշտօն ու-
նենալու՝ որ և է համազգեստ մը կրէ ,
երեք ամսէն մէկ տարի բանտարկու-
թեամբ կը պատժուի :

ԳԼՈՒԽ ԺԱ .

Կրօնից ազատութեան արգելք ըլլալ .
Հասարակաց բարոյնն նուիրեալ կամ
զարդուց վերաբերեալ լինքեր
աւերել կամ վնասել .

307 . 132 . Ո՛վ որ վեհափառ կայսեր
հպատակաց արածնութիւն ունեցած
կրօնական պաշտամանց և արարողու-
թեանց կատարումը շփոթէ , կամ բռն-
նութեամբ և սպառնալեօք խափանէ ,
յանցանքին ծանրութեանը համեմատ
մէկ շաբաթէն երեք ամիս բանտարկու-
թեամբ կը պատժուի :

307 . 133 . Ո՛վ որ հասարակաց օգ-

տին նուիրեալ կամ զարդուց վերաբեր-
եալ հրապարակային շէնքեր կամ յիշա-
տակարաններ քայքայէ , քանդէ , կո-
տորատէ , կամ ապականէ , մզկիթաց բակե-
րուն և հրապարակաց և զքօսատեղեաց
մէջի ծառերը կտրատէ կամ ջնջէ , ըրած
փնասը տուժելէ զատ , մէկ ամսէն մէկ
տարի բանտարկութեամբ և մէկէն տա-
սըն Մէճիտիէ ոսկի տուգանք տալով կը
պատժուի :



ԳԼՈՒԽ ԺԲ .

Հեռագրական հաղորդակցութեանց
արգելք ըլլալ .

307 . 134 . Ո՛վ որ անհոգութեամբ
հեռագրի գործողութեանը արգելք
պատճառէ կամ գործիքներն աւրելով
անոնց չկրնալ բանելուն պատճառ ըլ-
լալ , հինգէն յիսուն մէճիտիէ ոսկի տու-
գանքով կը պատժուի : Իսկ եթէ չա-
րամտութեամբ ըրած ըլլալը հաստա-
տուի , տուգանքին հետ նաև երեք ամ-
սէն երկու տարի բանտարկութիւն կը
կրէ :

307 . 135 . Ո՛վ որ հեռագրի թելե-
րը կամ յախճապակներն ու ձողերը
խցելով հեռագրական հաղորդակցու-
թիւնը խափանէ , երեք ամսէն երկու
տարի բանտարկութեամբ և հինգէն յի-
սուն Մէճիտիէ ոսկի տուգանքով կը
պատժուի :

307 . 136 . Ո՛վ որ տէրութեան մէջ
խռովութիւն մը պատահած ժամանակ
հեռագրական մէկ կամ աւելի դիժերը
խանգարէ , կամ դանոնք որ և իցէ կեր-
պով անգործածելի ընէ , կամ բռնու-
թեամբ դրաւէ , այն կերպով որ իշ-
խանութեան աւանդապահներուն մէջ
հաղորդակցութիւնը կտրի , կամ մաս-
նաւորաց թղթակցութեանցն արգելք
ըլլայ . կամ վերջապէս ով որ հեռագ-
րական գծի մը հաստատութեանը դէմ
կենայ բռնութեամբ , ժամանակեայ շրջ-

Թայայ աշխատութեամբ և յիսունէն
երկու հարիւր մէծիօտի ոսկի տուգան
քով կը պատժուի :

Գ. ԱՌԻՍ Ժ. Գ .

Առանց հրամանի տպարան հաստատել :—

Վնասակար գրուածներ հրատարակել :—

Վարժոցներու մէջ ուսուցչութեան կա-
նոնաց հակառակ վարուիլ .

307 . 137 . Ով որ առանց կայսերա-
կան կառավարութեան հրամանին տը-
պարան բանայ և գիրքեր ու գրուածներ
տպէ , յիսուն Մէծիօտի ոսկի տուգան
քով կը պատժուի , և տպարանն ալ կը
գոցուի :

307 . 138 . Ով որ կայսերական կա-
ռավարութեան հրամանաւ բացուած
տպարանի մը մէջ Օսմանեան տէրու-
թեան շահուցը մնասակար , կառավա-
րութեան անդամոց կամ վեհապառ կայ-
սեր հպատակ ազգի մը գէմ լրագիր կամ
գիրք կամ ուրիշ գրուածներ հրատա-
րակէ , տասնէն յիսուն Մէծիօտի ոսկի
տուգանքով կը պատժուի : Միանգա-
մայն տպած բաներն ալ կը գրաւին , և
տպարանն ալ յանցանքին ծանրութեա-
նը համեմատ առ ժամանակեայ կերպով
կամ մշանջենապէս կը գոցուի :

307 . 139 . Ով որ բարի վարուց և
պարկեշտութեան հակառակ արձակ
կամ ոտանաւոր գրութիւններ կամ ան-
պիտի պատկերներ տպէ , տպել տայ և
հրատարակէ կամ բաժնէ , մէկէն հինգ
մէծիօտի ոսկի տուգանքով և քսանե-
չորս ժամէն մէկ շաբաթ բանտարկու-
թեամբ կը պատժուի :

307 . 140 . Ով որ հասարակաց կրթու-
թեան կանոններուն հակառակ վարժոց
բանայ , հինգէն երսուն մէծիօտի ոսկի
տուգանք կուտայ և վարժոցն ալ կը
գոցուի :

307 . 141 . Ով որ հասարակաց կրթ-
ութեան կանոններուն հակառակ ա-

ռանց հրամանի վարժապետութիւնը
նէ , երկուքէն տասն մէծիօտի ոսկի տու-
գանք կը վճարէ , և վարժապետութիւն
ընելէ կարգիլուի :

307 . 142 . Աթէ վարժոցի մը մէջ
հասարակաց կրթութեան կանոններուն
հակառակ դասադիրք մը գործածուի ,
այն գիրքը կարգացրնել տուող անօրէ-
նը , կամ եթէ անօրէն չկայ՝ գործածող
վարժապետը մէկ շաբաթէն մէկ տարի
բանտարկութեամբ կը պատժուի :

Գ. ԱՌԻՍ Ժ. Գ .

Դրամանեցութիւն .

307 . 143 . Ով որ Օսմանեան տէ-
րութեան մէջ օրինաւորապէս շրջաբե-
րութիւն ունեցող ոսկի և արծաթ դը-
րամոց կեղծը շինէ , կամ խարտոցով ,
կարոցով , ժանտաջրով (թիզապ) և ու-
րիշ որ և է միջոցաւ դրամոց մէջ գըրա-
նուած ոսկիին կամ արծաթին մէկ մա-
օր հանէ , կամ դրամ մը ոսկեզօծելով՝
աւելի բարձրագին դրամոց մը արժէք
տալ ուզէ անօր , կամ այս տեսակ ներ-
գութեան գործակցութիւնը ընէ , կամ
խարդախեալ դրամոց Տաճկաստան
մանելուն մասնակցի , և կամ զանոնք քը-
շելու զբաղի , ժամանակեայ շղթայակապ
աշխատութեամբ կը պատժուի , և այս
պատժոյն տեղութիւնը երբէք տասն
տարիէն պակաս չկրնար ըլլալ :

307 . 144 . Ով որ օսմանեան տէրու-
թեան մէջ շրջաբերութեան ընդունուած
պղինձ դրամներուն կեղծը շինէ , կամ
այն տեսակ կեղծ դրամոց Տաճկաստա-
նի հողը մտնելուն կամ շրջաբերու-
թեանը գործակից ըլլայ , ժամանակեայ
շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուի :

307 . 145 . Ով որ օսմանեան հողին
մէջ օտար տէրութեանց դրամներուն
կեղծը շինէ , կամ 143րդ յօդուածին

մէջ յայտնուած միջոցներով անոնց արժէքը պակասեցրնէ կամ գոյնը փոխէ, կամ խարդախեալ օտար դրամոց Տաճ կաստան մանելուն կամ շրջաբերելուն գործակցի կամ զբաղի, ժամանակեայ շղթայակապ աշխատութեամբ կը պատժուի:

307. 146. Մախրնթաց յօդուածներուն մէջ նշանակեալ մասնակցութիւնը չարտահանիր անոնց, որք կեղծ կամ նենգեալ դրամներն իբրև լաւ դրամ ընդունելով շրջաբերութեան հանած ըլլան: սակայն ով որ այն դրամոց կեղծ կամ խարդախեալ ըլլալն հասկընալէ ետև գործածէ, այն դրամոց ներկայացուցած դումարին առ նուազն երեք պատիկ՝ և առ առաւելն վեց պատիկ տուգանք կը վճարէ, և այս տուգանքը երբէք չկրնար մէկ մէծիտիէ ոսկիէն պահաս ըլլալ:

307. 147. Մախրնթաց 143, 144 և 145 յօդուածոց մէջ յիշուած յանցանքները գործող անձինք՝ եթէ յանցանքը կատարելապէս գործադրուելէ կամ իշխանութեան կողմանէ փնտռուելէ առաջ՝ հաստատեալ իշխանութեանց իմացընեն, կամ փնտռուելէ ետքն ալ՝ իրենց մեղատակիցները ձեռք տան, պատժէ ազատ կը մնան: այսու ամենայնիւ ոստիկանութեան հսկողութեանը ներքև կը դրուին:

ԳԼՈՒԽ ԺԵ.
Խարդախութիւն

307. 148. Ով որ կայսերական կառավարութեան հրովարտակներուն կեղծը շինէ ու շինել տայ, կամ այլափոխէ ու այլափոխել տայ, ով որ տէրութեան պաշտօնատարներուն կնքոյն և կամ ըստորագրութեան կեղծը շինէ ու շինել տայ, ով որ պաշտօնարանի մը կամ իշխանութեան մը կնքոյն կեղծը շինէ կամ գործածէ, ով որ տէրութեան գանձուն

ձուն հանած մուրհակներուն կամ սէրկիներուն կեղծը շինէ կամ զանոնք այլափոխէ, և կամ անոնց կեղծ ու այլափոխեալը գործածէ, կամ օսմանեան հողը մոցրնէ, ժամանակեայ շղթայակապ աշխատութեամբ կամ բերդարգելութեամբ կը պատժուի, և այս պատժոյն աւելորդութիւնը տասն տարիէն պահաս չկրնար ըլլալ:

307. 149. Ով որ տէրութեան վերաբերեալ և կայսերական Թուղթա կըրող որ և է դրոշմ մը կեղծէ կամ խարդախէ, ժամանակեայ շղթայակապ աշխատութեամբ կամ բերդարգելութեամբ կը պատժուի, և այս պատժոյն աւելորդութիւնը չկրնար երբէք տասն տարիէն աւելի ըլլալ: Իսկ ով որ տէրութեան դրոշմ մը հնարիւք ձեռք ձգելով՝ տէրութեան կամ երկրին շահուցը վնասակար կերպով գործածէ, երեք տարի բանտարկութեամբ կը պատժուի:

307. 150. Ով որ կայսերական կառավարութեան անուեով այլ և այլ նիւթոց կամ վաճառաց փրայ կօխելու սահմանեալ դրոշմի կամ կնքոյ մը կեղծը շինէ, ով որ իշխանութեան մը կամ տէրութեան հրամանաւ հաստատեալ ընկերութեան մը և կամ առևտրական տան մը յատուկ եղած կրնքոյն կամ դրոշմին և կամ նշանին կեղծը շինէ, կամ այն կեղծ կնքը դրոշմը կամ նշանը գործածէ, երեք տարի բանտարկութեամբ կը պատժուի, և այս խարդախութեան երեսէն պատճառեալ վնասներն ալ կը տուժէ: Իսկ ով որ վերոյիշեալ կնքներուն կամ դրոշմներուն և կամ նշաններուն իսկը կերպիւմը ձեռք ձգելով, պաշտօնարանի մը, իշխանութեան մը, առևտրական ընկերութեան մը կամ մասնաւոր տան մը շահուցը վնասակար կերպով գործածէ, պատճառաւ վնասը տուժելէն զատ՝

վեց ամսէն մէկ տարի բանտարկութեամբ
կը պատժուի :

307. 151. Նախընթաց յօդուածնե-
րուն մէջ յիշուած խարդախութեան
յանցանքները գործող անձինք՝ եթէ
յանցանքը կատարելապէս գործուելէ
կամ իշխանութեան կողմանէ փնտրու-
ուելէ առաջ՝ գործն ու հեղինակներն
հաստատեալ իշխանութեանց յայտ-
նեն, կամ փնտրուելէ ետքն ալ իրենց
մեղաակիցները ձեռք տան, պատժէ ա-
զատ կը մնան, բայց ոստիկանութեան
հսկողութեանը ներքե կը դրուին ժա-
մանակեայ կերպով :

307. 152. Տէրութեան որ և է պաշ-
տօնատար մը, որ իր պաշտօնը կատա-
րած ժամանակ կանխաւ տրուած վըճ-
ուոց, տեղեկագրոց, արձանագրոց, տու-
մարաց կամ ուրիշ դրութեանց մէջ
շաւելուած ընելով, բան խառնելով,
գիր կնիք կամ ստորագրութիւն փոխե-
լով, և կամ անուան մը տեղ ուրիշ
անուն դնելով խարդախութիւն մ'ը-
նէ, ժամանակեայ շղթայակապ աշխա-
տութեամբ կամ բերդարգելութեամբ
կը պատժուի, և այս պատժոյն տեղ-
ղութիւնը տասն տարիէն պակաս չկր-
նար բլլալ : Իսկ եթէ նոյն խարդախու-
թիւնն ընողները պաշտօնատար չեն, առ-
առաւելն եօթն տարի շղթայակապ աշ-
խատութեամբ կամ բերդարգելու-
թեամբ կը պատժուին :

307. 153. Դատաստանական ատեա-
նի կամ ժողովի և կամ տէրութեան
որ և է պաշտօնարանի մէջ գործա-
ծուած պաշտօնատար մը, որ իր պաշ-
տօնին պահանջմանը համեմատ դրու-
թիւն մը շարագրած ժամանակ գործին
տէրերուն յայտարարութիւններն ու
խօսքերը այլայլելով, կամ սուտը ճրջ-
մարտի տեղ անցունելով, և կամ չք-
խոստովանեալ իրողութիւններն իրրև

խոստովանեալ ցուցնելով՝ բուն գոր-
ծը կամ պարագաները խարդախու-
թեամբ այլափոխէ, շղթայակապ աշ-
խատութեամբ կամ բերդարգելութեամբ
կը պատժուի, և այս պատժոյն տեղ-
ղութիւնը տասն տարիէն պակաս չկր-
նար բլլալ երբէք :

307. 154. Ով որ նախընթաց յօ-
դուածոց մէջ յիշուած խարդախեալ
գրութիւնները գիտութեամբ գործա-
ծէ, եօթն տարիէն աւելի չբլլալու պայ-
մանաւ շղթայակապ աշխատութեամբ
կամ բերդարգելութեամբ կը պատ-
ժուի :

307. 155. Ով որ վերը յիշուած
կերպերէն մէկովը մասնաւորի վե-
րաբերեալ կամ առանձնական գրու-
թեան մը մէջ խարդախութիւն ընէ
կամ այս տեսակ խարդախեալ գրու-
թիւն մը գիտութեամբ գործածէ, մէկ
տարիէն երեք տարի բանտարկութեամբ
կը պատժուի :

307. 156. Ով որ անցագրի կամ
ձանրու հրամանագրի մէջ կեղծ անուն
դրել տայ կամ այս տեսակ խարդա-
խութեամբ ձանրու թուղթ առնելու
համար երաշխաւորութիւն ընէ, վեց
ամսէն երկու տարի բանտարկութեամբ
կը պատժուի :

307. 157. Ով որ սուտ կամ խար-
դախեալ ձանրու թուղթ կամ անցա-
գիր շինէ, կամ սկիզբէն ճշմարիտ ե-
ղող ձանրու թուղթ կամ անցագիր մը
խարդախելով այլայլէ, կամ այս տե-
սակ կեղծ կամ խարդախեալ թուղթ
մը գործածէ, մէկ տարիէն երեք տա-
րի բանտարկութեամբ կը պատժուի :

307. 158. Եւն օթեանապետները
(խանձր), սրճարանապետները, պանդո-
կապետներն և ուրիշ օրական վարձով
մարդ բնակեցընողները, որ իրենց ըն-
դունած ու բնակեցուցած անձանց բուն

անունը գիտնալով՝ կեղծ անունամբ ար-
ձանագրեն զանոնք իրենց տուժարին
մէջ, մէկ ամսէն երեք տարի բանտար-
կութեամբ կը պատժուին :

307. 159°. Տէրու թեան այն պաշա-
տատարները՝ որ հաստատեալ կանոնաց
հակառակ՝ առանց երաշխաւոր առնե-
լու ճանքու հրամանագիր կամ անցա-
ցիր տան, պաշտօնէ կը ձգուին և վեց
ամսէն մէկ տարի բանտարկութեամբ
կը պատժուին : Իսկ եթէ տուած ճան-
քու թուղթերնուն մէջ գիտութեամբ
կեղծ անուն գրեն, վեց ամսէն երկու
տարի բանտարկութեամբ կը պատժուին :

307. 160°. Ով որ տէրութեան որ և է
ճառայութենէ ազատ մնալու կամ ու-
րիշ մ' ազատելու համար բժշկի կամ
վերաբուժի մ' անունով հիւանդու-
թեան կամ ախտաւորութեան սուտ
վկայագիր շինէ, մէկ տարիէն երեք տա-
րի բանտարկութեամբ կը պատժուի :

307. 161°. Բժիշկ մը կամ վերաբոյժ
մը՝ որ աղերսանաց անալով կամ ակնա-
ռութեամբ՝ տէրութեան ճառայութե-
նէ մարդ ազատելու համար հիւանդու-
թեան կամ ախտաւորութեան սուտ
վկայագիր տայ, մէկ տարիէն երեք տա-
րի բանտարկութեամբ կը պատժուի :
Իսկ եթէ ստակ կամ ընծայ ստանա-
լով ըրած ըլլայ, կաշառառութեան
դէմ սահմանեալ պատիժը կը կրէ իբ-
րև կաշառառու :

307. 162°. Որ և է կեղծ կամ խոր-
գախտեալ բան մը գործածողը՝ եթէ
կեղծ կամ խորգախտեալ ըլլալուն ճա-
նօթութիւն չունենայ, պատժէ ազատ
կը մնայ :

Գ. ՈՒՆ ԺԶ.
Հրձգութիւն.

307. 163°. Ով որ քաղաքաց կամ
գեղերու մէջ կամ անոնցմէ դուրս

դանուած բնակելի կամ անբնակ շէն-
քեր կամ նաւեր կամաւ և դիտմամբ
հրոյ ճարակ տայ, թէ՛ իր սեփականու-
թիւնն ըլլան և թէ ոչ՝ մահուամբ կը
պատժուի :

307. 164°. Ով որ քաղաքներէ կամ
գեղերէ դուրս ուրիշ սեփականութիւ-
նն եղած անբնակ և անբնակելի շէն-
քեր, նաւեր, անտառներ, ճառաս-
տաններ կամ չքաղուած հունձք կամաւ
և դիտմամբ հրոյ ճարակ ընէ, մշտն-
ջենաւոր շղթայակապ աշխատութեամբ
կը պատժուի : Իսկ եթէ կրակի տուած
վերոյիշեալ նիւթերն իր ստացուածքն
ըլլան, և հրդեհին ծաւալմամբն այրոյ
ալ մնաս պատճառէ, ժամանակեայ
շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուի :

307. 165°. Ով որ շինութեան կամ
վառելու սահմանեալ փայտեր կամ
քաղուած հունձք կամաւ և դիտ-
մամբ հրոյ ճարակ ընէ, ժամանակեայ
շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուի, եթէ իր սեփականութիւնն ե-
ղած չըլլան : Իսկ եթէ իր սեփականու-
թիւնն ըլլան և զանոնք այրելով կամ
վին ուրիշ ալ մնաս հասցրնէ, ժամա-
նակեայ բանտարկութեամբ կը պատ-
ժուի :

307. 166°. Եթէ այս կերպով բռն-
կած տեղեր մարդիկ դանուելով մէկ
կամ աւելի հոգիներ այրին, կամաւ
հրձգութիւն ընողներն անխտիր մահ-
ուամբ կը պատժուին :

307. 167°. Ով որ ինչ և իցէ շէն-
քեր և անշարժ կամ շարժական սեփա-
կանութիւններ բռնկցրնելու ստիպէ
մէկը և ուժ կամ բռնութիւն բանե-
ցրնէ անոր վրայ, շղթայակապ աշխա-
տութեամբ կը պատժուի :



ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՍՆԱՒՈՐԱՅ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԿ ՈՃԻՐՔ ԵՒ
ՅԱՆՑԱՆՔ ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՏԻՃԸ

ԳԼՈՒԽ Ա.

Մարդասպանութիւն, վիրաւորութիւն,
հարուած, սպառնալիք.

307. 168. Մարդասպանութիւնն է
անձ մը մեռցընել՝ զէնքով, թոյնով
կամ ուրիշ որ և է կերպիւ:

307. 169. Անխամտածութեամբ
մարդասպանութիւնն է՝ ոճիրը գործ-
ելէն առաջ կանխաւ միտքը դրած
ըլլալը:

307. 170. Մարդասպանութիւնը
նոզ անձ մը՝ երբոր կանխամտածու-
թեամբ ըրած ըլլան օրինաւորապէս
հաստատուի, օրինաց համեմատ մահ-
ուան կը գատապարտուի:

307. 171. Օրինաց վճիռները չը-
կրնալով անհատական իրաւունքը խա-
փանել, սպանելոյն ժողանդները՝ եթէ
կան՝ իրենց անհատական իրաւանց դա-
տը կրնան Շ. երիի օրինաց համեմատ վա-
րել:

307. 172. Եթէ մարդասպանի մը
կեանքը շնորհուելով՝ արեան փոխարէն
արեամբ կամ մահուամբ պատժուելէ
ազատի, մշտնջենաւոր կամ տասնևհինգ
տարիէն պակաս չըլլալու պայմանաւ
ժամանակեայ շղթայակապ աշխատու-
թեամբ կը պատժուի:

307. 173. Մահուան պատիժ կը
վճուուի ըստ օրինաց այն անձանց դէմ,
որք չարագործութիւնն իրենց արհեստ
ըրած, կամ իրենց անցեալ վարքովն
այնպէս ճանչուած ըլլալով, մեծ ոճիր
մը գործելու համար տանջանք կամ
անդթութիւն ի գործ դնեն այլոց վրայ:

307. 174. Ալ որ առանց կանխա-
մտածութեան մարդ մ' սպաննէ, տասն
և հինգ տարի շղթայակապ աշխատու-
թեամբ կը պատժուի: Սակայն եթէ
մարդասպանութեան հետ կամ առաջ
և կամ վերջը ուրիշ ոճիր մ' ալ գործ-
ած ըլլայ, կամ ըրած սպանութիւ-
նըն ուրիշ չարութիւն մը գործելու
դիտաւորութենէ պատճառեալ ըլլայ,
մահուամբ կը պատժուի:

307. 175. Ալ որ մարդասպանի մը
օժանդակութիւն կամ օգնականութիւն
ընէ, ժամանակեայ շղթայակապ աշխա-
տութեամբ կը պատժուի:

307. 176. Ալ որ սպանեալ մարդու
մը մարմինը թաքուցանէ, կամ ձեռքն
հաս իշխանութեանց չիմացընելով և
քննութիւն ըլլալէ առաջ թաղէ, մէկ
ամսէն մէկ տարի բանտարկութեամբ և
մէկէն հինգ մէծիտիէ ոսկի տուգանքով
կը պատժուի: Իսկ եթէ սպանութեան
օճիրին ալ գործակցութիւն ըրած ըլ-
լայ, անոր պատիժն ալ գատ կը կրէ:

307. 177. Ալ որ մարդ մը վիրա-
ւորելով կամ զարնելով՝ զայն խեղան-
գամ ընէ, կամ անոր մէկ անդամին կրա-
րուելուն կամ անպիտանանալուն պատ-
ճառ ըլլայ, դարմանին համար պէտք
եղած ծախքն և օրինօք վճուուած ար-
եան գինն հատուցանելու դատապարտ-
ւելէ գատ՝ երեք տարի շղթայակապ
աշխատութեամբ կը պատժուի: Իսկ
եթէ կանխամտածութեամբ ըրած ըլլա-
լը հաստատուի, մինչև տասն տարի
շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուի:

307. 178. Ալ որ մարդ մը քանո
րէն աւելի հիւանդացընելու կամ գործ-
ելն ետ ձգելու կերպով՝ ծեծէ կամ վի-
րաւորէ, վեց ամսէն երկու տարի բան-
տարկութեամբ կը պատժուի, և միան-
գամայն անոր դարմանին ծախքն ու ա-

և ուրչէքը կամ առողջ եղած ժամանակ
ընելք վաստակին փոխարէնն ալ վճա-
րելու կը դատապարտուի: Իսկ եթէ
կանխամտածութեամբ բրած ըլլալը հաս-
տատուի, երեք ամսէն երեք տարի բան-
տարկութեամբ կը պատժուի:

807. 179°. Արքոր վերքը կամ հար-
ւածը նախընթաց յօդուածին մէջ յիշ-
ւած ծանրութիւնը չունենայ, յանցա-
ւորը մէկ շաբաթէն մէկ տարի բանտար-
կութեամբ կը պատժուի, կամ մէկէն
հինգ Մէճիտիէ ոսկի վերաւորելոյն
հատուցում վճարելու կը դատապարտ-
ուի: Այս երկու պատիժն ալ միադա-
մայն կրնան վճռուիլ: Իսկ եթէ կան-
խամտածութեամբ բրած ըլլալը հաս-
տատուի, մէկ ամսէն երկու տարի բան-
տարկութեամբ կը պատժուի, վերոյիշ-
եալ տոյժն ալ վճարելով:

807. 180°. Եթէ հաստատուի որ արը-
ւած վերքը կամ հարուածները մեռ-
ցրելու նպատակաւ էին, և յանցաւո-
րին կամքէն կամ կարողութենէն դուրս
պարագաներ աչն նպատակին արդելք ե-
ղած են, վերքը կամ հարուածին նշան-
ները թէ՛ ծանր ըլլան և թէ՛ թեթեւ,
յանցաւորը՝ նախընթաց երեք յօդուա-
ծոց տրամադրութեանց համաձայն վեր-
քին կամ հարուածոց աստիճանին հա-
մեմատ վճռուելք հատուցումը կամ
դարմանի ծախքն ու արեան դինը վճա-
րելու դատապարտուելէ զատ՝ անպատ-
ձառ ժամանակեայ շղթայակապ աշխա-
տութեամբ կը պատժուի:

807. 181°. Եթէ սպաննելու, փրա-
ւորելու կամ դարնելու օձիրներն ու
յանցանքներն ապստամբութեամբ և ա-
ւարառութեամբ կատարուին, այս ու-
ձիրներն ու յանցանքները դործող ան-
ձինք ըստ օրինաց կը պատժուին: Բայց
ապստամբութեան ու աւարառու-

թեան թելադրիչներն ու գրգռիչներս
ալ անձամբ կատարողներուն պէս նոյն
պատիժները կը կրեն: Սակայն, արեան
փոխարէն արեան պատիժը Շէրիին
վճռոյն համեմատ կը դործադրի:

807. 182°. Ալ որ դիպուածով մարդ
մ'սպաննէ, կամ յակամայից պատձառ-
ըլլայ, մեռնողին ժառանգներուն ըստ
Շէրիի օրինաց հարկ եղած հատու-
ցումը ընելէ ետև, եթէ սպանութիւնն
անգգուշութեամբ կամ հաստատեալ
կանոնաց անուշադրութեամբ դործած
ըլլայ, վեց ամսէն երկու տարի բան-
տարկութեամբ ալ կը պատժուի:

807. 183°. Ալ որ դիպուածով մարդ
ծեծէ կամ վիրուորէ, կամ յակամա-
յից վերք կամ ուռեցք պատձառէ,
դարմանի և անգործութեան ծախքը
վճարելու կը դատապարտուի: Իսկ ե-
թէ այն հարուածը կամ վերքն անդա-
մատութիւն կամ խեղութիւն պատձա-
ռէ, ըստ Շէրիի օրինաց արեան դինն
ալ վճարելու կը դատապարտուի: Իսկ
եթէ այն վերքը կամ հարուածն անըզ-
դուշութեամբ կամ հաստատեալ կա-
նոնաց անուշադրութեամբ տուած ըլ-
լայ, մէկ շաբաթէն երկու ամիս բան-
տարկութեամբ ալ կը պատժուի:

807. 184°. Եթէ մարդասպանու-
թիւնն իր կամքը բռնութեամբ կատա-
րել տալու կարող մեծաւորի մը հրա-
մանաւ գործուի, այն մեծաւորը կը
պատժուի իբրև մարդասպան:

« Իր կամքը բռնութեամբ կատա-
րել տալու կարող » ըսելով՝ այն մարդը
կը հասկցուի, որ իր հրամանը կատա-
րել չուզողը կրնայ մեռցրնել: Այս պա-
րագայէն դուրս, եթէ ստորակարգեալ
մը իր մեծաւորին այս տեսակ հրամանը
կատարէ, չկրնար արդարանալ և իբրև
մարդասպան կը պատժուի: Իսկ մեծա-
ւորը՝ որ առ անց իր կամքը բռնութեամբ

կատարել տալու կարողութեան՝ այն քա-
պանութիւնն ընելու հրաման ըրած է,
ժամանակեայ շղթայակապ աշխատու-
թեամբ կը պատժուի :

307. 185°. Աթէ մէկը՝ բռնութեամբ
իր կամքը կատարել տալու կարող մե-
ծաւորի մը հրամանաւ մարդ ծեծէ կամ
վերաւորէ, հեղինակին դէմ վերը վըճ-
ռուած պատիժները մեծաւորը կը կրէ՝
գործածուած բռնութեանց ծանրու-
թեանը համեմատ : Իսկ եթէ հրաման
ընող մեծաւորն իր կամքը բռնութեամբ
կատարել տալու կարող մարդ չէ, պատի-
ժը բուն զարնողը կամ վերաւորողը կը կրէ,
և հրաման ընող մեծաւորն ալ մէկ շա-
բաթէն մէկ տարի բանտարկութեամբ
կը պատժուի :

Սակայն եթէ բռնութիւն կրող
անձին անդամատութիւն կամ խեղու-
թիւն պատճառի, հրաման ընող մեծա-
ւորն անպատճառ ժամանակեայ շղթա-
յակապ աշխատութեամբ կը պատժուի :

307. 186°. Այն անձը՝ որ իր կեանքը
ազատելու կամ իր պատուոյն ու հա-
մեստութեանը դէմ գործուելիք նա-
խատիւնքէ մը ազատելու համար ինքզինք
պաշտպանելով մարդ մեռցընէ կամ վե-
րաւորէ՝ պատժոյ ենթակայ չըլլար :

307. 187°. 'Սմանապէս' եթէ մէկը
գիշերանց սանդուղ զնելով մէկուն տու-
նը կամ խանութը և կամ սենեակը
մտնել ուզած ժամանակ, կամ բանա-
լիով գոցուած տեղ մը բանալու աշխա-
տած ժամանակ, և կամ բնակեալ տան
մը կամ անոր յարակից մէկ շէնքին
պատը ծակած կամ դուռը կտրած ժա-
մանակ՝ զայն վանելու համար սպանու-
թիւն կամ վերաւորութիւն գործուի,
պատժոյ ենթակայ չըլլար :

Աթէ այս դէպքը ցերեկ ժամանակ
պատահի, սպանութիւնը վերաւորու-
թիւնը կամ հարուածը թէ և չկրնար

բոլորովին պատժէ ազատ մնալ, բայց
գործողը արդարանալի համարուելով
1907 յօդուածին համեմատ կը դատ-
ուի :

307. 188°. Այն մարդը՝ որ իր կինը
կամ իր ընտանեաց վերաբերեալ կինե-
րէն մէկն ուրիշէ մը հետ շուրթեան
յանցանքի մէջ բռնելով երկուքը մէկէն
սպաննէ, պատժէ ազատ կը մնայ :

307. 189°. Սպանութիւնն՝ ինչպէս
'նակ վերք և հարուած' նմանապէս ար-
դարանալի են՝ եթէ նմանօրինակ գոր-
ծելով գրգռեալ ըլլան : Սակայն ըստ
որում ատրութեան զինուորներուն կամ
զինուորական պաշտօնակիւ ընտրուն համար
բացառութիւն կայ, որ իրենց պաշտօ-
նին կատարմանը մէջ գործած սպանու-
թեանց վերաւորութեանց և հարուա-
ծոց համար բնաւ պատասխանատու
չեն՝ երբոր իրենց պաշտօնին յատուկ
եղած կանոնաց համեմատ վարուած ըլ-
լան, ուստի ով որ անոնց դէմ գնելով
փոխարէն ընէ, չկրնար արդարանալ :

307. 190°. Սպանութիւն ընող, վե-
րաւորող կամ զարնող անձինք՝ եթէ
արդարանալի պատճառներ ունենանին
սպացուցուի, երեք ամսէն երեք տարի
բանտարկութեամբ կը պատժուին, և
ասկէց զատ՝ գործին ծանրութեան հա-
մեմատ հինգէն տասն տարի օստիկա-
նութեան հսկողութեանը ներքեւ կը
դրուին :

307. 191°. Ով որ իրեն ստակ տա-
լու կամ իր նշանակած տեղը ստակ կամ
ուրիշ որ և է բան մը դրկելու կամ որ
և է պայման մը կատարել տալու հա-
մար, անանուն կամ ստորագրեալ, կրնք
եալ կամ անկնիք նամակու և կամ ու-
րիշ մարդու բերնով մէկու մը սպառ-
նալիք ընէ, և այն սպառնացած չարի-
քը սոյն օրինաց համեմատ մահուամբ
կամ մշտնջենաւոր շղթայակապ աշխա-
տութեամբ պատժելի ոճիւր մ' ըլլայ :

ժամանակեայ շղթայակապ աշխատու-
թեամբ կը պատժուի թէ և սպառ-
նակքն իգործ դրուած չըլլայ: Իսկ ե-
թէ սպառնացած չարիքը վերոյիշեալ
պատիժներէն թեթև պատժոյ ենթա-
կայ ըլլալէք յանցանք մ'ըլլայ, յանցաւո-
րը թէ և սպառնակքն իգործ դրած
չըլլայ, մէկէն երեք տարի բանտարկու-
թեամբ և երեքէն քսանմէծիտիէ ոսկի
տուգանքով կը պատժուի:

Գ. ԱՌԻԹ Բ.

Մանկավիճութիւն, խարդախեալ ընպէտք
եւ առանց երաշխարարութեան բռնա-
ւոր նիւթեր վաճառել.

307. 192. Ով որ զարնելով կամ
ուրիշ բռնութիւններով յղե կնոջ մը
վիժմանը պատճառ ըլլայ, Եւրիի օրի-
նաց համեմատ արեան գին վճարելու
կը դատապարտուի և եթէ բռնութիւ-
նը սոյն նպատակաւ գործած ըլլայ, մի-
անգամայն ժամանակեայ շղթայակապ
աշխատութեամբ կը պատժուի:

307. 193. Ով որ դեղ տալով կամ
հնարք ցուցնելով յղե կնոջ մը վիժ-
մանը պատճառ ըլլայ՝ կնոջն հաճու-
թեամբ կամ ոչ՝ վեց ամսէն երկու տա-
րի բանտարկութեամբ կը պատժուի,
Եթէ յանցաւորը բժիշկ, վիրաբոյժ
կամ դեղագործ ըլլայ, ժամանակեայ
շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուի:

307. 194. Ով որ դիտմամբ այնպի-
սի նիւթ մը մէկուն տայ կամ վաճա-
ռէ, որ առանց զայն սպաննելու՝ հի-
ւանդութեան կամ ժամանակ մը գոր-
ծէ մնալուն պատճառ ըլլայ, մէկ ամ-
սէն մէկ տարի բանտարկութեամբ կը
պատժուի, և միանգամայն վնաս կրող
անձին երեքէն քսանմէծիտիէ ոսկի
հատուցում վճարելու կը դատա-
պարտուի:

307. 195. Դեղագործ մը՝ որ առանց
վկայական ունենալու դեղարան բանայ,
տասնէն յիսուն Մէծիտիէ ոսկի տու-
գանքով կը պատժուի և դեղարանն ալ
կը գոցուի:

307. 196. Ով որ վնասակար դե-
ղեր, խարդախեալ ընպէտք, և դնողէն
երաշխարարութիւն չտանելով թունա-
ւոր նիւթեր վաճառէ, մէկ շաբաթէն
երկու տարի բանտարկութեամբ և մէ-
կէն քսան և հինգ Մէծիտիէ ոսկի տու-
գանքով կը պատժուի, և այն նիւթերն
ալ կը դրաւուին:

Գ. ԱՌԻԹ Գ.

Համեստութեան բռնաբարութիւն.

307. 197. Տասն և մէկ տարեկանէն
վար աղու մը համեստութեան բռնա-
բարութիւնը վեց ամսէն պակաս չըլլա-
լու պայմանաւ բանտարկութեամբ կը
պատժուի:

307. 198. Ով որ բռնութեամբ մէ-
կու մը համեստութիւնը պղծէ, ժամա-
նակեայ շղթայակապ աշխատութեամբ
կը պատժուի:

307. 199. Եթէ բռնութեամբ հա-
մեստութիւն պղծողը՝ բռնաբարելոյն
դատախարակը, վերակացուն կամ ծառան
ըլլայ, հինգ տարիէն պակաս չըլլալու
պայմանաւ ժամանակեայ շղթայակապ
աշխատութեամբ կը պատժուի:

307. 200. Եթէ բռնաբարութիւնը
կոյս աղջկան մը վրայ կատարուի, յան-
ցաւորը՝ ժամանակեայ շղթայակապ աշ-
խատութեամբ պատժուելէ զատ, բռ-
նաբարելոյն հատուցում մ'ալ վճարե-
լու կը դատապարտուի:

307. 201. Ով որ դեռահասակ պա-
տանիններ կամ աղջկներ թելադրելով
կամ գլխէ հանելով համեստութեան

հակառակ մոլութիւններու հրապուրէ-
զրգուէ կամ նպաստէ, մէկ ամսէն մէկ
տարի բանտարկութեամբ կը պատ-
ժուի: Աթէ թելադրողը, հրապուրողը
կամ դիւրացրնողը հայրը մայրը կամ
ինամական ըլլան, վեց ամսէն տարի ու
կէս բանտարկութեամբ կը պատժուին:

807. 202°. Ով որ հրապարակաւ հա-
մեստութեան հակառակ պղծագործու-
թիւն մ'ընելու յանդգնի, երեք ամսէն
մէկ տարի բանտարկութեամբ և մէկէն
տասն Սէճիտիէ ոսկի տուգանքով կը
պատժուի:



ԳԼՈՒԽ Դ.

Ապօրինաւոր կերպով մարդ բանտարկել
կամ արգելուլ, աղայ կամ պատանի
գողնալ, աղզիկ փախցընել:

807. 203°. Ով որ՝ առանց հաստատ-
եալ իշխանութեանց հրամանին՝ և ամ-
բաստանելոյ մը բանտարկութեանը վե-
րաբերեալ օրինաց ու կանոնաց որոշած
պարագաներէն դուրս՝ որ և է անձ մը
բանտարկէ կամ իբրև գրաւ պահէ, վեց
ամսէն երեք տարի բանտարկութեամբ
կը պատժուի:

Ով որ մարդ մը բանտարկելու կամ
իբրև գրաւ պահելու համար գիտու-
թեամբ տեղ ցուցնէ, երեք ամսէն երեք
տարի բանտարկութեամբ կը պատժուի:

807. 204°. Ասխրնթաց յօդուածին մէջ
նշանակուած բանտարկութիւնը եթէ
տէրութեան գործակալներու կեղծ գգես-
տով, կամ սուտ անունով, և կամ շինծու
հրամանագիր ցուցընելով կատարուած
ըլլայ, յանցաւորը ժամանակեայ շղթա-
յակապ աշխատութեամբ կը պատժուի:
Իսկ եթէ որ և է պարագայի մէջ ար-
զիլեալ կամ բանտարկեալ անձանց
մահուան սպառնալիք եղած կամ մարմ-
նական չարչարանք տրուած ըլլայ, յան-
ցաւորն անպատճառ ժամանակեայ շղ-

թայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուի:

807. 205°. Ով որ տղու մը տեղ ու-
րիշ մը դնելով փոխէ, կամ կնոջ մը
չճնած տղան գիտութեամբ անորմէ ծըն-
եալ համարի, վեց ամսէն երեք տարի
բանտարկութեամբ կը պատժուի:

Նոյն պատիժը կը կրէ նաև ով որ
տղայ գողնայ կամ անյայտ ընէ: Ասկէց
զատ՝ յանցաւորը չկրնար աղատութիւն
գտնել մինչև որ տղան երևան չհանէ,
կամ անոր մեռած ըլլալը չհաստատուի:

807. 206°. Ով որ յարբուես չհասած
տղայ մը բռնութեամբ կամ նենգու-
թեամբ փախցունէ, երեք ամսէն մէկ
տարի բանտարկութեամբ կը պատժուի:

Աթէ փախուցուած տղան անչափա-
հաս աղջիկ մ'է, փախցրնողը ժամա-
նակեայ շղթայակապ աշխատութեամբ
կը պատժուի:

Աթէ փախուցուած աղջկան կու-
սութիւնը բռնաբարուած ըլլայ, յան-
ցաւորը սոյն եղեռնագործութեան դէմ
վճռուած պատժոյն մեծագոյն աստիճա-
նը կը կրէ:

Իսկ եթէ աղջիկ փախցրնողն անոր
հետ պսակուած ըլլայ, Շէրիի օրինաց
համեմատ կը դատուի:



ԳԼՈՒԽ Ե.

Սուտ վկայութիւն. սուտ երգում:

807. 207°. Ով որ եղեռնական գոր-
ծի մը մէջ սուտ վկայութիւն ընէ՝ ամ-
բաստանելոյն դէմ կամ՝ ինպատ, ժամա-
նակեայ շղթայակապ աշխատութեամբ
կը պատժուի, հանդերձ հրապարակա-
տեսիլ նշաւակութեամբ:

Իսկ եթէ ամբաստանեալը սուտ վե-
կայութեան երեսէն ժամանակեայ շղ-
թայակապ աշխատութեանէ աւելի ծանր
պատիժ մը կրած ըլլայ, նոյն պատիժը
կը կրէ նաև սուտ վկայութիւն ընողը:

807. 208. Ով որ յանցանաց կամ օրինազանցութեան վերաբերեալ գործի մը մէջ սուտ վկայութիւն ընէ՝ ամբաստանելոյն դէմ կամ ՚ինպատ, մէկէն հինգ ամիս բանտարկութեամբ կը պատժուի :

807. 209. Քաղաքային դատի մէջ սուտ վկայութիւն ընողը՝ վեց ամսէն մէկ տարի բանտարկութեամբ կը պատժուի :

807. 210. Եթէ սուտ վկայութիւն ընողն ստակ ընդունելով ըրած ըլլայ, փոխանակեալ ստակին հաւասար տուգանք վճարելէ զատ, թէ՛ առնողը և թէ՛ տուողը կաշառառութեան և կաշառատուութեան դէմ սահմանուած պատիժը կը կրեն :

807. 211. Ով որ ճշմարիտ վկայութիւն տուող մը բռնութեամբ արգելու, կամ բռնութեամբ սուտ վկայութիւն ընել տայ, սուտ վկաներու դէմ սահմանուած պատիժը կը կրէ՝ յանցանաց ստիճանին համեմատ :

807. 212. Ով որ քաղաքային դատի մը մէջ երդում ընելու պարտաւորուելով՝ սուտ երդում ընէ, հրապարակատեսիլ նշաւակութեամբ և՛ վեց ամսէն պակաս չըլլալու կերպով բանտարկութեամբ կը պատժուի :

Գ.Լ.ՈՒԽ Զ.

Ջրպարտութիւն. բռնամարտ. գաղտնեաց յայտնութիւն.

807. 213. Ով որ ժողովի կամ գումարման մը մէջ ատենաբանելով կամ տպեալ ու ձեռագիր թուղթեր փակցրնելով կամ բաժնելով՝ մէկու մը վրայ այնպիսի չարախօսութիւններ ընէ, որք եթէ ստոյգ ըլլան՝ այն անձն ըստ օրինաց պատժոյ ենթակայ կըլլայ կամ գո՛նէ ժողովողեան արհամարհանացը կենթարկի, ով որ չարամտութեամբ տէրութեան պաշտօնատարի մը դէմ զրպարտութիւն

խօսի, այն ամբաստանութիւններն ստոյգ եղած ժամանակ ըստ օրինաց ինչ պատիժ որ ամբաստանեալը պիտի կրէր, նոյն պատիժը չարախօսը կամ զրպարտիչը կը կրէ, եթէ ըսածներուն զրպարտութիւն ըլլալը հաստատուի : Սակայն գործ մը կամ եղելութիւն մը կանոնաւորապէս և ըստ օրինաց իշխանութեան իմացրնել կամ մէկու մը դէմ դատ բանալը սոյն տրամադրութեան ներքե չի յար :

807. 214. Ով որ առանց որոշ յանցանք մը ցուցրնելու՝ մէկուն վրայ ամօթալի արատ մը դնէ, կամ որ և է պատուոյ դպչելիք խօսքերով նախատէ կամ թշնամանէ, քան և չօրս ժամէն մէկ ամիս բանտարկութեամբ, կամ կէսէն երեք Մէճիտիէ ոսկի տուգանքով կը պատժուի :

807. 215. Բժիշկ, վերաբոյժ, դեղագործ, մանկաբարձ և ուրիշ ասոնց նման անձինք՝ որք իրենց վիճակաւը կամ արհեստովն անձնական գաղտնեաց աւանդապահներ են, եթէ ըստ օրինաց իրենցմէ պահանջուած տեղեկութիւնները տալու պարտականութենէն դուրս գաղտնիք մը յայտնեն, քան և չօրս ժամէն մէկ շաբաթ բանտարկութեամբ և մէկ արծաթ Մէճիտիէէն մէկ Մէճիտիէ ոսկի տուգանքով կը պատժուին :

Գ.Լ.ՈՒԽ Է.
Գողութիւն.

807. 216. Լըրկան մը իր կնոջմէն կամ կնոջ մը իր երկրնէն գողցած ապրանքը, թէ՛ մէկ տեղ բնակած ըլլան և թէ՛ զատ, նոյնպէս որդւոյ մը կամ մերձաւոր ժառանգի մը իր հօրմէն, մօրմէն կամ մերձաւորագոյն մեծէն գողցած ապրանքը, նմանապէս հօր մը մօր մը կամ մերձաւորագոյն մեծի մը իր զաւկէն կամ մերձաւորագոյն ժառանգէն գողցած ապրանքը՝

ձեռքէն առնուելով տիրոջը կը տրուի .
 Աթէ գողցուած ապրանքը ծախուած
 կամ կորսուած ըլլայ , գողցողը՝ եթէ
 վճարելու կարող չէ և գողութիւնն իրեն
 սովորյթ ըրած է , բանտարկութեամբ կը
 պատժուի . Իսկ ուրիշ ուր և է անձինք՝
 ուր գողցուած ապրանքը թաքուցած կ'սմ
 մասամբ և կամ ամբողջապէս իրենց շա-
 հուն գործածած ըլլան , իրրև գող կը
 պատժուին :

807 . 217° Մշտնջենաւոր շղթայա-
 կապ աշխատութեամբ կը պատժուին
 այն անձինք՝ ուր հետևեալ հինգ պարա-
 գաներով մէկէն գողութիւն ընեն . 1°
 եթէ գողութիւնը գիշերն ըլլայ . 2° ե-
 թէ երկու կամ առաւել անձանց ընկե-
 րակցութեամբ կատարուի . 3° եթէ գո-
 ղերը կամ մէջէնէն մէկը յայտնի կամ
 ծածկեալ զէնք ունենան . 4° եթէ գո-
 ղերը սանդուղք դնելով , կամ պատ ծա-
 կելով , կամ դուռ կ'օտրելով , կամ սուտ
 բանլիքով , կամ տէրութեան պաշտո-
 նատարի կերպարանք մտնելով և կամ
 իշխանութեան սուտ հրամանագիր ցու-
 ցրնելով՝ տուն մը կամ անոր յարա-
 կից շէնք մը , կամ բնակութիւն ե-
 դած տեղ մը մտնեն . 5° եթէ գողու-
 թիւնը բռնութեամբ կամ զինուց ըս-
 պառնայեօք կատարուի :

807 . 218° Այլ ուր բռնութեամբ և
 միանգամայն վերոյիշեալ հինգ պարագա-
 ներուն առաջին երկուքովը գողութիւն
 ընէ , ժամանակեայ շղթայակապ աշխա-
 տութեամբ կը պատժուի : Իսկ եթէ
 բռնութեամբ գողութիւն ընողը մարդ
 վերաւորած ըլլայ , մշտնջենաւոր շղթա-
 յակապ աշխատութեամբ կը պատժուի :

807 . 219° Աթէ գիշեր ժամանակ
 քանի մ' անձինք հասարակաց ճանբա-
 ներու վրայ գողութիւն ընեն , մշտն-
 ջենաւոր շղթայակապ աշխատութեամբ
 կը պատժուին :

807 . 220° Այլ ուր պատ ծակելով
 կամ սանդուղք դնելով և կամ սուտ
 բանլիքով՝ գող կամ որմախակ տեղ մը
 մտնելով գողութիւն ընէ , թէ և մէջը
 մարդ բնակած չըլլայ կամ այն տեղը
 բնակարանի մը մասը չըլլայ , ժամանա-
 կեայ շղթայակապ աշխատութեամբ կը
 պատժուի :

807 . 221° Մամնապէս ժամանակեայ
 շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
 ժուին այն անձինք՝ ուրք կամ բռնու-
 թեամբ գողութիւն ընեն՝ առանց մարդ
 վերաւորելու և ուրիշ պարագայից , և
 կամ առանց բռնութեան՝ բայց հե-
 տևեալ պարագաներով . 1° եթէ գո-
 ղութիւնը գիշերը կատարուի . 2° եթէ
 երկու կամ առաւել անձանց ձեռք
 կատարուի , և յանցաւորները կամ մէ-
 ջերնէն մէկը զենեալ ըլլայ :

807 . 222° Արեք տարի բանտարկու-
 թեամբ կը պատժուի այն անձը՝ ուր հե-
 տևեալ պարագայից մէկուն մէջ գո-
 ղութիւն ընէ . 1° եթէ գողութիւնը
 գիշերը և երկու կամ աւելի մարդոց
 ձեռք կատարուի , կամ այս երկու պա-
 րագաներուն մէկովը՝ բայց բնակեալ
 տեղւոյ մը կամ կրօնից նուիրեալ շէն-
 քի մը մէջ կատարուի . 2° եթէ յան-
 ցաւորը յայտնի կամ ծածկեալ զէնք
 ունենայ , թէ և գողութիւնը ցերեկ
 ժամանակ մէկ մարդու մը ձեռք կա-
 տարուի , և գողութիւն եղած տեղն
 ալ մարդ բնակած չըլլայ . 3° եթէ գո-
 ղը վարձուոր ծառայ ըլլալով , իր տիրո-
 ջը կամ անոր տունը եկող մէկուն կամ
 տիրոջը հետ ուրիշ տուն մը երթալով
 այն տանը տիրոջ ապրանքը գողնայ .
 կամ մէկու մը քով աշկերտ կամ գոր-
 ծաւոր ըլլալով , վարպետին տանը կամ
 գործարանին մէջ և կամ իր սովորա-
 կան գործին ու աշխատութեան տեղը
 գողութիւն ընէ . 4° եթէ գողութիւն
 ընողը օթևանապետ , պանդոխապետ ,

կառավար, նառավար կամ այս տեսակ մարդ մը և կամ ասոնց մարդն ըլլայ, և իրեն յանձնուած ապրանքը մասամբ կամ ամբողջապէս գողնայ:

807. 223°. Այն կառավարները, բեռնաբարձ գրաստիվարողները կամ նաև ավարները՝ որ փոխադրութեան համար իրենց յանձնուած ուտելեաց կամ ըմպելեաց մէկ մասը գողնալով՝ անոնց տեղ առողջութեան փնասակար նիւթեր դրնեն, երեք տարի բանտարկութեամբ կը պատժուին: Իսկ եթէ փնասակար նիւթեր խառնած չըլլան, մէկ ամսէն մէկ տարի բանտարկութեամբ և կէսէն հինգ Մէճիտիէ ոսկի տուգանքով կը պատժուին:

807. 224°. Այլ որ բեռնաբարձ կառավարի կամ հեծանելի ձի կամ գրաստ, մանր ու խոշոր տուար, մշակութեան գործիք, վաճառելու համար կտրուած վառելու կամ շինութեան փայտ, քարահանքերէ կտորած քար, ձկնորսարաններէ ձուկ, կամ լիճերէ տղրուկ գողնայ, մէկ ամսէն մէկ տարի բանտարկութեամբ կը պատժուի, և միանգամայն գոյցած բաները՝ եթէ կը կենան՝ ետ տալու կամ անոնց արժէքը վճարելու կը դատապարտուի:

807. 225°. Այլ որ հնձուած արմտիք ընդեղէն կամ ուրիշ հողային շահաւետ բերք զիջուած տեղէն գողնայ, փոխարէնը տիրոջը վճարելու դատապարտուելէ վատ՝ քսան և չորս ժամէն երեք ամիս բանտարկութեամբ կը պատժուի: Աթէ գողութիւնը գիշերանց, քանի մը մարդոց ձեռօք և կառքով կամ գրաստներով կատարուի, մէկ տարի բանտարկութեամբ կը պատժուի:

807. 226°. Արբոր դեռ չհնձուած և հողէն չհանուած արմտիք կամ ուրիշ հողային շահաւետ բերք գողցուի

սապատով, զամբիւղով, պարկով և ասոնց նման իրերով, կամ սայլերու և գրաստներու միջոցաւ, և կամ քանի մ'անձանց գործակցութեամբ, յանցաւորները քսան և չորս ժամէն երեք ամիս բանտարկութեամբ կը պատժուին:

807. 227°. Այլ որ գողութիւն ընելու համար արտերու, այգիներու կամ պարտէզներու բաժանման սահմանները կամ սահմանաց նշանները փոփոխէ, տասն և հինգ օրէն երեք ամիս բանտարկութեամբ կը պատժուի:

807. 228°. Այլ որ կեղծ բանլիք կամ կղպանք բանալու համար որ և է գործիք մը շինէ, երեք ամսէն մէկ տարի բանտարկութեամբ կը պատժուի: Աթէ յանցաւորն արհեստով դարբին ըլլայ, ժամանակեայ շղթայակապ աշխատութեամբ կը պատժուի:

807. 229°. Այլ որ բռնութեամբ մէկուն ձեռքէն պարտամուրհակ կամ անդորրագիր առնու կամ այս տեսակ գիր մը կնքել կամ ստորագրել տայ, ժամանակեայ շղթայակապ աշխատութեամբ կը պատժուի:

807. 230°. Քսակահատութիւններն և ուրիշ տեսակ գողութիւնները՝ որ սոյն գլխոյն մէջ նշանակեալ չեն, երեք ամսէն մէկ տարի բանտարկութեամբ կը պատժուին, և վերջն ալ երաշխաւորութեան ներքեւ կը դրուին ոստիկանութեան կողմանէ:



ԳԼՈՒԽ Ը.

Սեանհուրիւն եւ խաբերայուրիւն .

807. 231°. Առեւտրական օրինաց մէջ նշանակեալ պարագայից համեմատ խարդախութեամբ սնանկացող անձինք, ինչպէս նաև այնպիսի խարդախ սնանկութեան մը գործակից եղողները, եթէ

առևտրական օրինաց համեմատ յան-
յանքնին հաստատուի, ժամանակեայ
շղթայակապ աշխատութեամբ կը պատ-
ժուին:

807. 232. Պարզ անանկները մէկէն
երկու տարի բանտարկութեամբ կը
պատժուին:

807. 233. Ով որ խարդախ հնարք-
ներ գործածելով՝ մէկէ մը ստակ, ան-
շարժ կալուած, մուրհակ, ձեռագիր
և ուրիշ շարժական ինչք առնու և այս-
պէս ուրիշ գոյքը գրաւէ կամ յափրշ-
տակէ, երեք ամսէն երեք տարի բան-
տարկութեամբ և մէկէն յիսուն Մէ-
ծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուի:
Եթէ յանցաւորը տէրութեան պաշտօ-
նատար է, պաշտօնէն ալ կը ձգուի:

ԳԼՈՒԽ Թ.

Վստահութեան զեղծում.

807. 234. Ով որ բարին ու չարը օ-
րոշելու տարիքին հասած տղու մը պի-
տոյքը տկարութիւնները կամ կիրքը
չարաչար գործածելով՝ անոր վնասա-
կար ըլլալու կերպիւ ստակի կամ շար-
ժական ընչից վերաբերեալ փոխատու-
ութեանց կամ փոխառութեանց մուր-
հակներ, ընկալագրեր, առևտրական
թուղթեր կամ ուրիշ որ և է գրու-
թիւններ ստորագրել տալով ձեռքէն
առնու, երկու ամսէն երկու տարի բան-
տարկութեամբ կը պատժուի, և միան-
գամայն տուած վնասը հատուցանելէ ե-
տե, նոյն հատուցման քառորդէն աւելի
և մէկ Մէծիտիէ ոսկիէն պակաս չըլ-
լալու պայմանաւ ալ տուգանք տալու
կը դատապարտուի: Եթէ յանցաւորը
տղուն մեծը կամ խնամակալն է, բան-
տարկութիւնը երեք տարի տեղգութիւն
կուսենայ:

807. 235. Ով որ վստահութեամբ
իրեն յանձնուած ստորագրեալ կամ

կնքեալ ձերմակ թուղթի մը վրայ խար-
դախութեամբ մուրհակ կամ ընկալա-
գիր և կամ ուրիշ որ և է խոստմնագիր
մը գրէ, որով ստորագրողն անձը կամ
ստացուածքը վնասու ենթակայ ըլլայ,
վեց ամսէն պակաս չըլլալու կերպիւ
բանտարկութեամբ և հինգէն յիսուն
Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատ-
ժուի: Իսկ եթէ այն ստորագրեալ
ձերմակ թուղթն իրեն յանձնուած չըլ-
լալով, որ և է հնարիւք ձեռք անցու-
ցած և վրան սուտ ու կեղծ բաներ
գրած ըլլայ, իբրև խարդախ նկատուե-
լով՝ նոյն ոճրին գէմ սահմանուած
պատիժը կը կրէ:

807. 236. Ով որ աւանդի կամ
փոխանորդութեան ձամբով կամ ցոյց
տալու և վաճառելու և կամ որոշեալ
կերպիւ գործածելու համար իբրև
վարձով կամ անվարձ գործակալ իրեն
յանձնուած ինչք, վաճառք, գրամ,
մուրհակ և ուրիշ որ և է պարտաւորիչ
թուղթ կամ ստացագիր պահէ կամ
կորսնցրնէ տէրերուն վնաս հասցրնելու
կերպով, երկու ամսէն երկու տարի
բանտարկութեամբ կը պատժուի, և
տուած վնասն հատուցանելէ ետե՝ ա-
նոր քառորդին չափ ալ տուգանք տա-
լու կը դատապարտուի:

Եթէ այս յանցանքն ընողը վարձ-
ւոր ծառայ, աշակերտ, գրագիր կամ
գործաւոր մ'է և 'ի վնաս իւր տիրոջը
կամ վարպետին ըրած է, վնասը հա-
տուցանելէ զատ՝ մէկ տարիէն պակաս
չըլլալու կերպիւ բանտարկութեամբ կը
պատժուի:

807. 237. Ով որ դատաստանական
ատենի մէջ մուրհակ մը կամ թուղթ մը
դատարանին ցուցրնելէ և յանձնելէ ե-
տե, ետքը որ և է հնարքով գողնայ
կամ թաքուցանէ, մէկէն տասնևհինգ
Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատ-
ժուի:

ԳԼՈՒԽ Ժ .

Անուրդի ազատութեան արգելք: — Առեւտրական գործողութեանց մէջ գեղծում:

807 . 238 . Ով որ շարժական կամ անշարժ ընչից հրապարակական անուրդով վաճառմանը, գնմանը կամ վարձակալութեան մէջ խօսքով կամ գործով անուրդին ազատութեանն արգելք ըլլայ, տասն և հինգ օրէն երեք ամիս բանտարկութեամբ և մէկէն հարիւր Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուի:

807 . 239 . Եւսն անձինքը որ սուտ կամ զրպարտական լուրեր դիտմամբ հասարակութեան մէջ տարածելով, կամ բան մը վաճառողին ուզած գինէն աւելի առաջարկելով, կամ որ և է վաճառքի և նպարի մը գլխաւոր տէրերը զայն չվաճառելու կամ որ և է գինէ մ' աւելի վաճառել չտալու համար մեջերնին միարանելով, կամ ուրիշ որ և է խարդախ կամ ապօրինաւոր միջոցներով վաճառաց նպարաց կամ տէրութեան արժեթղթոց բնական և ազատ տուրեւտութեամբ ունեցած գիները բարձրացրնեն կամ իջեցրնեն, մէկ ամսէն մէկ տարի բանտարկութեամբ և հինգէն հարիւր Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուին:

Եւս պատիժները կը կրկնապատկին եթէ վերոյիշեալ ապօրինաւոր գործողութիւնները հացի, միսի, վառելու փայտի, անուխի և ուրիշ ամենահարկաւոր պիտոցից վրայ կատարուին:

807 . 240 . Ով որ ոսկեղէն և արծաթեղէն նիւթոց բաղադրութեան աստիճանին (այսպէս), կամ իբրև ճշմարիտ վաճառուած սուտ գոհարեղէնի մը և կամ ուրիշ որ և է վաճառքի մը տեսակին և որակութեանը վրայ գնողը խարէ. ով որ պակաս կշիռ կամ չափ գործածելով՝ վաճառուած նիւթոց մը քանակութեանը մէջ խարդախութիւն

ընէ, երեք ամսէն մէկ տարի բանտարկութեամբ կը պատժուի, խարած մարդուն վնասը կը հատուցանէ, և նոյն հատուցման քառորդէն աւելի չըլլալու և երեք արծաթ Մէծիտիէէն պակաս չըլլալու պայմանաւ ալ տուգանք կը վճարէ: Պակաս կշիռներն ու չափերն ալ կոտորաւելով կը ջնջուին:

807 . 241 . Ով որ հեղինակի մը արտօնութեանը հակառակ գիրք տպէ կամ տպել տայ, կամ յատուկ արտօնութիւն ունեցող մասնաւոր անձի մը կամ ընկերութեան մը շինելէ բանը շինէ կամ շինել տայ, կերպ մը խարդախութիւն ըրած ըլլալով, տպած կամ տպել տուած գիրքերն ու շինած բաները ձեռքէն առնուելով հեղինակին կամ արտօնութեան տիրոջը կը արուին, և միանգամայն յանցաւորը հինգէն հարիւր Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուի: Եւս տեսակ ապօրինաւոր տպագրութիւններ կամ արտադրութիւններ օտար երկիրներէ Օսմանեան հողը մտցրնողը նմանապէս հինգէն հարիւր Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուի: Իսկ այս տեսակ տպագրութիւններ կամ արտադրութիւններ գիտութեամբ վաճառողներն ալ մէկէն քսան և հինգ Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուին:

ԳԼՈՒԽ ԺԱ .

Բաղդի խաղ (գումար) եւ վրձնականաւորիւն (բիլյանքօ) .

807 . 242 . Ով որ բաղդի խաղը իրեն արհեստ և շահու միջոց ընելով յատուկ տեղ բանայ, և հասարակութիւնը հոն խաղալու հրաւիրէ և ընդունի, կամ հոն սեղանաւորութիւն ընելով ստակ վախ տայ, մէկ ամսէն վեց ամիս բանտարկութեամբ և մէկէն յիսուն Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուի: միանգամայն խաղուն տեղը

գանուած ստակն ու կարասին ալ յար-
քունիս կը դրաւի :

807 . 243 . Ով որ վիճակահանու-
թիւն բանայ , մէկ ամսէն վեց ամիս
բանտարկութեամբ և մէկէն յիսուն
Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատ-
ժուի : Միանգամայն վիճակի դրուած
ստակն ու կարասին ալ յարքունիս կը
դրաւի :

ԳՆՈՒԽ ԺԲ .

Օտարի բնից աւերում , զնգում , վնաս :

807 . 244 . Ով որ երկրագործի մը
մշակութեան գործիքը , կենդանեաց
փարախը և պահապանաց հիւղը կամ
խրճիթը կոտրտէ փլցընէ կամ աւերէ ,
գործած փնասն հատուցանելէ զատ՝ մէկ
շաբաթէն վեց ամիս բանտարկութեամբ
կը պատժուի :

807 . 245 . Ով որ մէկուն հեծնելու
կողք վարելու կամ բեռ կրելու ձին
կամ ուրիշ մէկ կենդանին կամ որ և
է տեսակ տուարն առանց հարկի ըս-
պաննէ , հետեւեալ կերպով կը պատ-
ժուի . եթէ այս յանցանքը՝ սպանեալ
կենդանւոյն տիրոջը կամ վարձակալին
կամ բաժանորդին (օրթագճը) վերա-
բերեալ շէնքերուն փարախներուն կամ
հողերուն մէջ կատարուի , յանցաւորը
մէկ ամսէն վեց ամիս բանտարկութեամբ
կը պատժուի : Եթէ յանցաւորն իր
սեփականութիւնն եղած կամ վարձով
բռնած և կամ բաժանորդ եղած տե-
ղերուն մէջ գործած ըլլայ սոյն յան-
ցանքը , մէկ շաբաթէն մէկ ամիս բան-
տարկութեամբ կը պատժուի : Իսկ ե-
թէ ուրիշ տեղ մը կատարած ըլլայ ,
տասն և հինգ օրէն ամիս ու կէս բան-
տարկութեամբ կը պատժուի : Ով որ
վերը յիշուած կենդանիներէն մէկը
թունաւորելով սպաննէ , երեք ամսէն
երկու տարի բանտարկութեամբ կը

պատժուի : Եսկից զատ վերոյիշեալ
ամեն պարագաներու մէջ յանցաւորը
գործած փնասը տիրոջը հատուցանելու
և մէկարծաթ Մէծիտիէն երկու ոսկի
Մէծիտիէ տուգանք վճարելու կը դա-
տապարտուի :

807 . 246 . Ով որ մէկուն սեփակա-
նութիւնն եղած հողին սահմանները
որոշող փոսերը լցընէ , և չոր կամ թաց
ճառերով ոստերով կամ ուրիշ որ և
է նիւթերով շինուած ցանկը աւրէ ,
մէկ շաբաթէն երեք ամիս բանտարկու-
թեամբ , և ըրած փնասը հատուցանելէ
ետեւ՝ անոր քառորդին չափ ալ տու-
գանքով կը պատժուի :

807 . 247 . Չ՝ ռազայքի , ջրաշարժ գոր-
ծարանի , աւազաններու կամ արուես-
տական լճակներու տէրերը կամ վարձա-
կալները , որ իրենց ջուրին վազելու
ձանբան հաստատեալ կանոնաց անհա-
մաձայն կամ հակառակ կերպիւ շինե-
լով , հասարակաց ձանբաները կամ այ-
լոց արտերը ողողելու պատճառ ըլլան ,
եղած փնասն հատուցանելէ զատ՝ քա-
ռորդին չափ ալ տուգանքով կը պատ-
ժուին :

807 . 248 . Ով որ փուռ , ծխնելոյց և
ուրիշ կրակ վառելու տեղեր մաքրելու և
նորոգելու անհոգութիւն ընելով , կամ
տուններու շէնքերու անտառներու այ-
գիներու պարտէզներու յարդի կամ
խոտի կամ դիւրավառ նիւթոց մօտ կը-
րակ վառելով կամ թաղերու մէջ հը-
րախաղութեան փամփուշտներ արձա-
կելով կամ այս տեսակ բան մ'ընելով
հրդեհ ծագելու պատճառ ըլլայ , երեք
օրէն մէկ շաբաթ բանտարկութեամբ և
մէկ Մէծիտիէ ոսկիէն քսան և հինգ
Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատ-
ժուի :

807 . 249 . Ով որ իրեն սեփականու-
թիւնը չեղած օթեան , տուն , ամեն

տեսակ շէնք , ճանբայ , կամուրջ , աղբիւր , ջրանցք , աղուգայ և ուրիշ այս տեսակ բաներ կամովին քանդէ կամ աւերէ , երեք ամսէն երկու տարի բանտարկութեամբ , և գործած վնասն հատուցանելէ զատ անոր քառորդին չափ ալ տուգանքով կը պատժուի : Աթէ մարդասպանութիւն կամ վիրաւորում ալ գործած ըլլայ , սոյն ոճիրներուն և յանցանաց դէմ սահմանեալ պատիժներն ալ զատ կը կրէ :

307 . 150° . Ով որ կայսերական կառավարութեան հրամանաւ կառուցուելիք շէնքի մը ձեռնարկութեանն ու կատարմանը առանց պատճառի բռնութեամբ արգելք ըլլայ , մէկ ամսէն մէկ տարի բանտարկութեամբ , և իր երեսէն պատճառեալ վնասները տուժելէ զատ անոր քառորդին չափ ալ տուգանքով կը պատժուի :

307 . 251° . Ով որ իշխանութեան վերաբերեալ տուժարներ , մուրհակներ , վճիռներ և ուրիշ պաշտօնական թուղթեր , նոյնպէս վաճառականաց և սեղանաւորաց վերաբերեալ թուղթեր , փոխանակազիր , մուրհակ , և ուրիշ որ և է գրութիւն որոց կորուստը վնաս կրնայ պատճառել , կամովին այրէ կամ ջնջէ , մէկ տարիէն երեք տարի բանտարկութեամբ և մէկէն տասն և հինգ Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուի :

307 . 252° . Ով որ զլուսը մարդիկ ժողովելով յայտնապէս և բռնութեամբ ուրիշ ասպրանքը կարասին կամ հունձքը աւարառնու կամ ապականէ , ժամանակեայ շղթայակապ աշխատութեամբ կը պատժուի . ասկէց զատ յանցաւորները յափշտակածնին ետ տալէ և տուժելէ զատ , իւրաքանչիւրը՝ մէկէն յետուն Մէծիտիէ ոսկի տուգանքով կը պատժուին : Սակայն այս տեսակ յանցանքի մը մէջ գտնուողները եթէ ապա

ցուցանեն որ ուրիշ թախանձանօքն ու գրգռութեամբ մասնակից եղած են այս բռնութիւններուն , մէկէն երեք տարի բանտարկութեամբ միայն կը պատժուին :

307 . 253° . Ով որ գեռ չկարուած հունձք , ինքնաբոյս կամ մարդու ձեռօք տնկուած ծառ և ուրիշ որ և է տունկեր կարտէ ջնջէ ապականէ , կամ ծառերու պատուաստն աւրէ , կամ մէկու մը այգին ու պարտէզն աւերէ կամ ապականէ , մէկ շաբաթէն տասն և հինգ օր բանտարկութեամբ և հատուցած վնասը տուժելով կը պատժուի :

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՆԵՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԳԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ ՁԱՆՅԱՌՈՒԹԵԱՆՅ ՊԱՏԻՃՆԵՐԸ

307 . 254° . Այն օթեանապետները (խանձր) և պանդոկապետները (լօզանտաձր) որք ոստիկանութեան պատուէրին համեմատ զիշերները լապտեր վառելու անհողութիւն ընեն , այն անձինքը՝ որ առանց հարկի փողոցներուն մէջ որ և է նիւթեր գնելով կամ թողլով հասարակաց ազատ անցուղարձին արգելք ըլլան , այն անձինքը՝ որ ինչ և իցէ նիւթեր փողոցներու և հրապարակաց մէջ գնելու կամ շեղձակուտելու , և կամ բազմամարդ փողոցներու մէջ ահան (լաղըմ) կամ ջուրի ճանբայ բանալու հարկադրելով՝ այն տեղին վրայ զիշերները լապտեր կամ կանդեղ չվառեն , որպէս զի անցորդները տեսնելով զգուշանան և վտանգ մը չպատահին . անոնք որ վիչելու վտանգի մէջ եղող շէնքերը նորոգելու կամ փոքրնելու վերաբերեալ ոստիկանութեան կանոնաց և պատուիրանաց ունին չգնեն , կամ փողոցներուն և հասարակաց ճանբայներու վրայ աւլուք (սիւփրիւնթիւ) և

ուրիշ գարշահատիւթեր թափեն . այն
անձինքը՝ որ անխոհեմութեամբ այնպի-
սի նիւթեր փողոյ նետեն որք կրնան
անցորդները վերաւորել կամ վնասել ,
և անոնք որ քաղաքային իշխանութեան
կանոններուն համաձայն չփարուին , մե-
կէն հինգ Մեծխտիէ արծաթ հինգնոց
տուգանքով կը պատժուին :

307 . 255 . Արախ գործածող արհես-
տաւորներէն որոնք որ իրենց գործարա-
նին վաւարանը կամ փուռը մերթ ընդ
մերթ մաքրելու և նորոգելու անհո-
գութիւն ընեն . նմանապէս այն անձինք՝
որք հրախաղութեան փակփուշտ ար-
ձակին թաղերու մէջ կամ ուրիշ վնաս
պատճառելիք տեղեր . և այն անձինք՝
որ քաղաքի մը կամ գիւղի մը մէջ հո-
րապէն պարպեն , մեկէն հինգ Մեծխ-
տիէ արծաթ հինգնոց տուգանքով և
քսան և չորս ժամէն երեք օր բանտար-
կութեամբ կը պատժուին :

307 . 256 . Այն օթեանապետները
պանդոկատները կամ վարձու սե-
նեակ տուողները՝ որ իրենց սնակեցու-
ցած մարդիկը կանոնաւոր տուժարի մը
մէջ արձանագրելու անհոգութիւն ը-
նեն , կամ նոյն տուժարը ժամանակին
ձեռնհաս իշխանութեանց շնորհալստը-
նեն . այն անձինք՝ որ բազմամարդ տե-
ղեր ձի վաղորդեն . այն անձինք՝ որ ի-
րենց պահպանութեան ներքեւ եղած
խելագարներ կամ վնասակար ու փայրաբ
կենդանիներ դուրս թող տան . այն ան-
ձինք՝ որ տէրութեան պրամներն իրենց
որոշեալ գնովն ընդունիչ չուղեն . վեր-
ջապէս այն անձինք՝ որ փոանդի , նաւա-
կոծութեան , ջրհեղեղի , հրդեհի և
ուրիշ վտանգաւոր արկածներու ժա-
մանակ , ինչպէս նաև աւազակութեան ,
աւարաւորութեան , ոճրադործութեան
պորազանելու մէջ և օգնութեան կան-
չուած ժամանակ ձեռքերնէն եկած
կամ իրենցմէ ուղուած օգնութիւնն ու

ծառայութիւնը զլանան և անհոգու-
թիւն ընեն , հինգ արծաթ հինգնոցէն
տասն արծաթ հինգնոց տուգանքով կը
պատժուին :

307 . 257 . Առողջութեան վնասա-
կար կամ հիւնալով լսկած աւրուած
ու հոռած պտուղ և ուրիշ սւտելիք-
ները՝ ծովը կամ գետը և կամ քաղա-
քէն դուրս տեղ մը կը նետուին , և զա-
նոնք ՚ի վաճառ հանող կամ ն'րկայա-
ցրնողներն ալ վեցէն տասն արծաթ
հինգնոց տուգանքով կը պատժուին :

307 . 258 . Ալ որ մարդու մը վրայ կամ
ուրիշի տանը կամ պարտիկին և կամ
ուրիշ որ և է շէնքին մէջ կամսու քար
կամ ուրիշ որ և է կարծր նիւթ կամ
զողորմիւն նետէ , ինչպէս նաև ով
որ իրաւունք չունեցած տեղ մը մանկ
կամ անոր սէջէն անցնի , վեցէն տասն
արծաթ հինգնոց տուգանքով և քսան
եւ չորս ժամէն հինգ օր բանտարկու-
թեամբ կը պատժուի :

307 . 259 . Ալ որ ուրիշի շարժական
ընչիւր վնաս պատճառէ գիտութեամբ ,
կամ խելագար մարդ , վնասակար կեն-
դանի և կամ գաղան թող տալով ,
կամ ուրիշի կենդանիներն ու տուար-
ները փաղթրնելով կամ սաստիկ ծան-
րաբեռնելով , կամ քար և ուրիշ կար-
ծրը նիւթեր անոնց նետելով , կամ տեղ
մը փորելով ու փոս բանալով այն կեն-
դանիներուն մահուան կամ վերաւո-
րութեան պատճառ ըլլայ , արժան եղաւ
հատուցու մը վճարելէ զատ , տասնէն
տասնէն հինգ արծաթ հինգնոց տու-
գանքով կը պատժուի :

307 . 260 . Ալ որ առանց պատճա-
ռի աղաղակ կամ աղմուկ հանելով հա-
ւարակաց հանգստութիւնը վրդովէ ,
կամ իշխանութեան հրամանաւ պա-
տերու վրայ փակցուած կամ կախուած
ծանուցումները դիտմամբ վերցընէ կամ
պատուէ , տասնէն տասնէն հինգ արծաթ

հինգնոց տուգանքով և երեք օրէն մէկ շաբաթ բանտարկութեամբ կը պատժուի :

807 . 261° Ո՛վ որ ուրիշի մը շրջափաշ կամ մշակեալ և կամ հունչք և բերք պարունակող հողին , արտին , պարտէզին կամ այգւոյն մէջ կենդանի մտցրնէ կամ թող տայ , հասուցած վընասը տուժելէ զատ , տասնէն տասնէ հինգ արծաթ հինգնոց տուգանքով կը պատժուի :

807 . 262° Ո՛վ որ իր խանութին կամ վաճառատանը կամ շուկաներու և անվաճառներու մէջ պակաս արամ , խարդախեալ կշիռ կամ կենդինար , պակաս չափ և գրուան ունենայ , կամ օրինօք որոշուած կշիռներէն ու չափերէն սարքեր չափ կամ կշիռ գործածէ , տասնէն տասնէ հինգ արծաթ հինգնոց տուգանքով կը պատժուի , և միանգամայն վերայիշեալ չափերն ու կշիռներն ալ ձեռքէն կառնուի :

807 , 263° Ո՛վ որ ըստ կանոնաց ու

որոշուած և հրատարակուած դիմէն կամ սահէն աւելի գնով նպար վաճառէ , տասնէն տասն և հինգ արծաթ հինգնոց տուգանքով և քսանուչորս ժամէն երեք օր բանտարկութեամբ կը պատժուի : Աթէ հաց , միս , վառելու փայտ , ածուխ և ուրիշ հասարակաց անենա հարկաւոր պօրէն մ'ըլլայ վաճառածը , երեք օրէն մէկ շաբաթ բանտարկութեամբ և տասն և հինգէն քսան արծաթ հինգնոց տուգանքով կը պատժուի :

807 . 264° Ո՛վ որ հասարակաց ձանբայները , հրապարակները , ձեւելիքները կամ ուրիշ հասարակաց օգտին նըւիրեալ տեղերն աւրէ , կամ անոնց բայնքէն կամ երկայնքէն տեղ գողնայ , երեք օրէն մէկ շաբաթ բանտարկութեամբ և տասն և հինգէն քսան արծաթ հինգնոց տուգանքով կը պատժուի : Անոնցամայն աւրած տեղին նորոգութեան ծախքը վճարելու և յափշտակած տեղն ալ ետ տալու կը դատապարտուի :

ՅԱԻԵԼԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ի ԶԱՆԱԶԱՆ ՅՕԴՈՒԱԾՍ

ՊԵՏԺԵԿԸՆ ՕՐԻՆԵՑ

ՕՍՓՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԱԻ

ՅԱԻԵԼՈՒԱԾ Դ 807 . 62

Այն անձինքը՝ որ զէնք առնելով լեռները կը պարտին ձանբորդները բռնելու և կօղսպտելու համար , և աւագակ կամ յելուգակ կը կոչուին , սոյն վիճակուն և գործած եղեռնութեանց ձանբութեանը համեմատ մշանջնաւոր

կամ ժամանակեայ շղթայակապ աշխատութեամբ կը պատժուին :

Սակայն այնպիսիները , որոց այս եղեռնութիւններն իրենց սովորական գործ մ'ըրած ըլլալը իրենց անցեալ փարքէն ձանջուի , կամ իրենց բռնած մարդոց դէմ բարբարոսական անգիտութիւններ գործած ըլլան , կամ վերջա

պէս աւարտակութեան հետ մարդասպան
նու թիւն ալ բրած բլան, մահուամբ
կը պատժուին :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 63

Մանք որ աւարտակները ճանչելով
անուց թարուցիչ բլանու հաճին, ժա
մանակեայ շղթայակապաշխատութեամբ
կը պատժուին :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 99

Եթէ իրենց ազդեցութիւնը կամ
խշտանութիւնն այսպէս գործածող ան
ձինք տէրութեան պաշտօնատար շին,
մէկ տարիէն աւելի չբլանու պայման
նաւ բանտարկութեամբ կը պատժուին :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 179

Ա որ սպառնալիք միայն ընելու
և չէ թէ սպաննելու դիտար որութեամբ
դէնք գործածէ, մէկ շաբաթէն վեց ա
միս բանտարկութեամբ կը պատժուին :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 180

Եթէ մեռցրնելու դիտար որութեամբ
գործածուած զէնքը յանցա
ւորին կամքէն դուրս պարտագաներու
պատճառաւ չկրնայ իր նպատակին հաս
նիլ, յանցաւորը նոյնպէս ժամանակեայ
շղթայակապ աշխատութեամբ կը պատ
ժուին :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 198

Եթէ համեստութեան դէմ վոր
ձուած բռնադատութիւնը յանցաւոր
րին կամքէն դուրս պարտագաներու պատ
ճառաւ չկրնայ կատարուիլ, յանցաւոր
ըր երեք ամսէն պահիս չբլանու պայ
մանաւ բանտարկութեամբ կը պատ
ժուին :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 200

Ա որ չափահաս ազնիկ մը խարէ
և դիտէ հանէ անուսնութեան խառու
նեքով, և ետքը չուզէ կնութեան առ

նուլ, անոր հատուցում մը վճարելու կը
դատարարուի, և մէկ շաբաթէն վեց
ամիս բանտարկութեամբ կը պատժուին :

Սակայն, սոյն արանադրութիւնն ի
գործ դրուելու համար հարկ է որ ա
մուսնութեան խոստումն ապացուցուի,
կամ ամբաստանելոյն խոստովանու
թեամբ, կամ օրկորդին ընտանեայ
կազմակէ :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 201

Շնորհիւ զատախազը մի միայն
կնոջ մը երկիր, կամ եթէ է իկ շու
նի՝ խնամակալը կրնայ բլան :

Այն կինը որուն շնորհիւ ընեւ
տուգուի, առ նուայն երեք ամիս, և
առ առաւելի երկու տարի բանտարկու
թեամբ կը պատժուին : Եւստէ երկիր կըր
նայ այս դատաւ պրտութեան հետեան
ըր սրգելուլ՝ իր կինը նոյնն առնելու
հաճելով :

Շնացող կնոջ մեղսակիւն ալ նոյն
պէս երեք ամսէն երկու տարի բանտար
կութեամբ և հարիւր Մէճիսիէ ոսկի
առ գանքով կը պատժուին :

Մեղսակցութեամբ ամբաստանեալ
անձին դէմ ընդունելի ապացոյցներն
են՝ յանցանքը գործած ժամանակ բլու
նու ելէն դատաւանակի մը կանանո, ին մէջ
գտնուիլը, կամ իր ձեռքը դրուած նա
մակներ կամ թուղթեր :

Սակայն սոյն արանադրութիւնն այն
ժամանակ միայն գործադրելի է, երբ որ
շնացող կնոջ այրը կամ խնամակալը
զատախազութիւնն ընէ : Իսկ ուրիշ
ան առակութեանց կամ գլխէ հանելու
գործերը՝ օտարական պարտագաներու
մէջ ռափկանութեան կանանայ եւթա
կայ կրլան :

Իր տանը մէջ շնութիւն ընող այ
րը, եթէ կնոջը բողոքելոյն առու դուի
հինգէն հարիւր Մէճիսիէ ոսկի առ
գանքով կը պատժուին :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 202

Այ որ երկու սեռի աղայոց կամ
դեռ ահապահներու անպարկեշտ խոս-
քեր բնէ , մէկ շաբաթէն մէկ ամիս
բանաստեղծութեամբ կը պատժուի : Այ
որ անոնց անձին ձեռք գպցրնէ , մէկէն
երկք ամիս բանաստեղծութեամբ կը պատ-
ժուի :

Այն մարդը որ կնոջ կերպարանք
մենկով կանանց յատուկ եզրած տեղ
մը մտնէ , երկք ամիսէն մէկ տարի բան-
աստեղծութեամբ կը պատժուի : Իսկ ե-
թէ այս կերպով մասժ տեղը սուտ ել
մէժ պատժոյ ենթակայ ըլլալիք սճիւր մը
կամ յանցանք մ' ալ գործէ , այն մեծ
պատիժը կը կրէ :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 206

Այ որ չափահաս աղջիկ մը բրո-
նու թեամբ առեւանկէ , (փախչրնէ) ե-
րկք ամիսէն երկք տարի բանաստեղծու-
թեամբ կը պատժուի : Այթէ առեւան-
կած անձն ամուսնացեալ է , առեւան-
կորը ժամանակեայ շղթայակապ աշ-
խատութեամբ կը պատժուի :

Այ որ չափահաս կամ անչափա-
հաս աղջիկ մը բռնութեամբ առեւան-
կորին օգնութիւն բնէ , մէկէն վեց
ամիս բանաստեղծութեամբ կը պատժուի :

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 230

Այթէ գողութիւնը գողին կամքէն
դուրս պարագաներու պատճառաւ ար-
գիլուի կամ չկատարուի , գողը դարձ-
եալ գողութեան դէմ սահմանուած
պատիժներ կը կրէ՝ գործին ծանու-
թեանը համեմատ :

Այ որ շղթայակապ աշխատու-
թեամբ պատժելի գողութեան մը հե-
ղինակներուն գիտութեամբ օգնէ կամ
անոնց գողցած նիւթերը թաքուցանէ ,
ժամանակեայ շղթայակապ աշխատու-
թեամբ կը պատժուի : Այ որ բանաստեղ-

կութեամբ պատժելի գողութեան մը
հեղինակներուն գիտութեամբ օժան-
դակէ կամ անոնց գողցած ապրանքը
թաքուցանէ , նոյն իսկ գողերուն կրած
պատիժը կը կրէ :

Գողութեան դէմ սահմանուած
պատիժներէն ազատ կը մնան այն յան-
ցաւ որները , որ դեռ իշխանութեան կող-
մէ չվնասուած , երթան նոյն , ճիւղե-
րուն կամ յանցանաց բուն հեղինակ-
ները յայտնեն , կամ թէ վնասուիլ
սկսելէ ետեւ ինքնին զանոնք յայտնեն ,
և անոնց բռնուիլը կամ ձեռք ի յնալը
դիւրացրնեն :

Այսու ամենախիւ մէկ տարիէն ա-
ւելի չըլլալու պայմանաւ ստախանու-
թեան հսկողութեանը ներքեւ մնալու
կը դատու գորտուին :

Հաստատեալ ի 3 Շապան
1277 (փետր . 1861)

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ի 307 . 19


Տաճիկ իւլէ մ ներք , շէյխերը , խա-
թիպները , իմամները , նոյնպէս ուրիշ
կրօնքներու վերաբերեալ կրօնական ան-
ձինք՝ հրապարակապես իշխանակա-
թեան պատժէն ազատ պիտի մնան :

Հաստատեալ ի 17 զիլհիճէ 1278
(21 14 յունիս 1862)

Վ Ե Ր Զ



ՅԼՆԿ ԳԼԽՈՑ



Ն Ա Խ Ա Շ Ա Ի Ի Ղ

	Երեւ
ԳԼՈՒԽ Ա . Առհասարակ դատապարտելի դործոց եւ պատժոց այլ եւ այլ աստիճանները , եւ քանի մը ընդհանուր սկզբունք .	1
ԳԼՈՒԽ Բ . Ոճրագործութեանց վերաբերեալ պատիժք .	2
ԳԼՈՒԽ Գ . Յանցանաց եւ օրինազանցութեանց վերաբերեալ պատիժք .	5
ԳԼՈՒԽ Դ . Ամբաստանեալ մը ներողութեան արժանի , պատասխանատու կամ պատժապարտ ընող պարագաներ .	5

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՀԱՍԱՐՍԿԱՅ ՎՆԱՍԱԿԱՐ ՈՃԻՐՆԵՐՆ ՈՒ ՅԱՆՅԱՆՔՆԵՐԸ , Ե Ի Ա Ն Ո Ն Ց Պ Ա Տ Ի Ժ Ն Ե Ր Ը

ԳԼՈՒԽ Ա . Օսմանեան տէրութեան արտաքին ապահովութիւնը վրդովող ոճիրք եւ յանցանք .	7
ԳԼՈՒԽ Բ . Օսմանեան տէրութեան ներքին ապահովութիւնը վրդովող ոճիրք եւ յանցանք .	8
ԳԼՈՒԽ Գ . Կաշառք .	10
ԳԼՈՒԽ Դ . Տէրութեան ընչից եւ դրամոց գողութիւն , — Զօշաքաղութիւն .	12
ԳԼՈՒԽ Ե . Իշխանութեան գեղծում : — Տէրութեան պաշտօնի մէջ պարտազանցութիւն .	14
ԳԼՈՒԽ Զ . Տէրութեան պաշտօնատարաց կողմանէ մասնաւորաց դէմ բռնութիւնք եւ հարստահարութիւնք .	15
ԳԼՈՒԽ Է . Անհնազանդութիւն , ընդդիմութիւն եւ թշնամանք տէրութեան պաշտօնատարներու կամ իշխանութեան գործակալներու .	17
ԳԼՈՒԽ Ը . Բանտարկեալ փախցընել , — Եղեռնագործներ պահել .	18
ԳԼՈՒԽ Թ . Կնիք խղել , — Պահուած պաշտօնական թուղթեր եւ աւանդներ վերցընել .	19
ԳԼՈՒԽ Ժ . Առանց իրաւանց պաշտօնական դէմք առնուլ .	20
ԳԼՈՒԽ ԺԱ . Կրօնից ազատութեան արգելք ըլլալ : — Հասարակաց բարւոյն նուիրեալ կամ զարդուց վերաբերեալ շէնքեր աւրել կամ վնասել .	20

ԳԼՈՒԽ ԺԲ . Հեռագրական հաղորդակցութեանց արդեւք ըլլալ .	20
ԳԼՈՒԽ ԺԳ . Առանց հրամանի ապարան հաստատել : — Վնասակար գրուածներ հրատարակել : — Վարժոցներու մէջ ու- սուցչութեան կանոնաց հակառակ վարուիլ .	21
ԳԼՈՒԽ ԺԴ . Գրամաններու թիւն .	21
ԳԼՈՒԽ ԺԵ . Խարդախութիւն .	22
ԳԼՈՒԽ ԺԶ . Հրձգութիւն .	24

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՍՆԱԻՈՐԱՅ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ ՈՃԻՐՔ ԵՒ ՅԱՆՑԱՆՔ ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՏԻԺԸ

ԳԼՈՒԽ Ա . Մարդասպանութիւն , վիրաւորութիւն , հարուած , սպառ- նալիք .	25
ԳԼՈՒԽ Բ . Մանկավիժութիւն . Խարդախեալ ըմպելիք եւ առանց երաշխաւորութեան թուճաւոր նիւթեր վաճառել .	28
ԳԼՈՒԽ Գ . Համեօտութեան բռնարարութիւն .	28
ԳԼՈՒԽ Դ . Ապօրինաւոր կերպով մարդ բանտարկել կամ արգելուլ . տղայ կամ պատանի գողնալ . աղջիկ փախցընել .	29
ԳԼՈՒԽ Ե . Սուտ վկայութիւն . սուտ երգում .	29
ԳԼՈՒԽ Զ . Զրպարտութիւն , թշնամանք . գաղանկաց յայտնութիւն .	30
ԳԼՈՒԽ Է . Գողութիւն .	30
ԳԼՈՒԽ Ը . Մնանկութիւն եւ խաբեբայութիւն .	32
ԳԼՈՒԽ Թ . Վստահութեան զեղծում .	33
ԳԼՈՒԽ Ժ . Աճուրդի ազատութեան արդեւք : — Առեւտրական գործողութեանց մէջ զեղծում .	34
ԳԼՈՒԽ ԺԱ . Բաղդի խաղ (խուճար) եւ վիճակահանութիւն (բիլյանքօ) .	34
ԳԼՈՒԽ ԺԲ . Օտարի ընչից աւերում , ջնջում , փնաս .	35

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ ԶԱՆՑԱՌՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԻԺՆԵՐԸ

ՅԱԻԵԼԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ	38
-------------------------	----

